


«Այունիքի անտառատեսություն» մասնաճյուղի 2024-
2033թթ-երի անտառկառավարման պլանի նախագծի

Ուղարկած էկոլոգիական
գնահատման հաշվետվություն
(Լրամշակված տարբերակ-խմբագրված)



Նախաձեռնող՝
«Ուայշ Գեյլ» ՍՊԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՍՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԵՎ ԿԱՊԸ ԱՅԼ ԱՌԱՋՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ	5
ՈԵԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԱԽԱՁԵՆՈՂԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՋԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	6
ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԱՌԵԱԼ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԳԱԼԻ ՎԱՍՍԱԿԱՐ ԱՋԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ, ՆՎԱՋԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՂՄԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (ԶԳՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԻՄՆԱՎՈՐԵԼ)	7
ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ) ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ և ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ	7
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	7
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ, ԱԶԳԱՅԻՆ և ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ԵՎ ԱՅՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՀԱՃՎԻ ԵՆ ԱՌՆՎԵԼ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՄՇԱԿԵԼԻՄ	8
ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ՝ ՆԵՐԱՌԵԱԼ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՋԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՆԴՐԱՎՀԱՄԱՅԻՆ	8
ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԻ ՇԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	9
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԲՆԴՈՏՆԵՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ՆԵՐԱՌՈՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	11
ՆՈՐՄԱՏԻՎԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ	12
Բաժին 1 ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՍՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	18
1.1. Անտառունտեսության տեղադրությունը.....	18
1.2. Տարածքի կազմավորումը	18
1.3. Անտառունտեսության կառուցվածքը և փոփոխությունը	19
1.4. «Սյունիքի անտառունտեսություն» մասնաճյուղի սահմանները	23
1.5. Լեռնագրության, ռելիէֆի և հողերի բնութագրեր.....	23
1.6. Կլիմա.....	24
1.7. Բուսական և կենդանական աշխարհ	26
1.8. Ջրագրություն.....	27
Բաժին 2. ԿԵՆՍԱԲԱԶՄԱՉԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	28
2.1 Ֆլորա.....	28
Անոթավոր բույսեր	28

Հիմնական վրանգներ	29
2.2 Ֆառնա	29
2.3 «Գորիսի» պետական արգելավայր	31
Բաժին 3. ԱՆՏԱՌՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	34
3.1 Ընդհանուր տեղեկություններ	34
3.2 Բնակչության սեռատարիքային բաշխվածքը	35
3.3 Աշխատանքային միգրացիա	35
3.4 Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը	36
3.5 Այլ ենթակառուցվածքներ	36
3.6 Գյուղատնտեսություն	37
3.7 Անտառատնտեսության հարակից տարածքներում սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացում	37
3.8 Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում	38
Բաժին 4. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԸ	39
4.1 Անտառշահագործման և փայտամշակման բնութագիրը	39
4.2 Բնափայտային անտառօգտագործում	39
4.2.1 Անտառվերականգնման հատումներ	40
4.2.2 Խնամքի հատումներ	41
4.2.3 Անտառապաշտպանական միջոցառումներ	45
4.2.4 Նախագծված անտառօգտագործման ծավալներն ըստ հատման տեսակների	47
4.3 Ոչ բնափայտային անտառօգտագործում	48
Բաժին 5. ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	50
5.1 Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում	50
5.2 Սննդի տրամադրման ծառայության գնահատում	53
5.3 Էկոտուրիզմ	54
Բաժին 6. ԲՆՈՒԹՅԱՆ և ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ	57
6.1 Բնության հուշարձաններ	57
6.2 Պատմամշակութային հուշարձաններ	58
Բաժին 7 ՀՆԱՐԱՎՈՐ ԴՐԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՈՒԺԵՂԱՑՄԱՆ, ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԲԱՑԱՌՄԱՆ, ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ	60
7.1 Ընդհանուր տեղեկատվություն	60
7.2 Անտառաճեցման պիտանելիության դասակարգում	61
7.3 Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ	62
7.4 Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները	62
7.5 Տնկանյութի աճեցում	72
7.6 Նախատեսվող միջոցառումների արդյունքում անտառային տարածքների արդյունավետության բարձրացում	73
Բաժին 8. ԱՆՏԱՌԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	78
8.1 Անտառապահանության խնդիրներն ու պահաբաժնների առանձնացումը	78
8.2 Պահպանություն անտառային հրդեհներից	79
8.3 Ճանապարհային ցանց	81
Բաժին 9 ԱՆՏԱՌՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	83
9.1 Անտառի և կենսաբազմազանության պահպանություն	83
9.2 Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ	84
9.2.1 Մշտադիտարկման և հետնախազգային վերլուծության ծրագիրը	84
9.2.2 Գիտական ուսումնասիրություններ	85
Հավելված 1. Թեմատիկ քարտեզներ	87

Քարտեզ 1. «Սյունիքի անտառտնտեսություն»	87
Քարտեզ 2. Սյունիքի անտառտնտեսության կառուցվածքն ըստ	
անտառպետությունների	88
Քարտեզ 3. Սյունիքի անտառտնտեսության ռելիէֆը	89
Քարտեզ 4. Սյունիքի անտառտնտեսության ջրային ցանցը	90
Քարտեզ 5. Անտառտնտեսության քառակուսային բաժանումը	91
Քարտեզ 6. Անտառտնտեսության տարածքն ըստ հողատեսքների նպատակային նշանակության	92
Քարտեզ 7. Անտառտնտեսության տարածքն ըստ գլխավոր ծառատեսակների	93
Քարտեզ 8. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի թեքության	94
Քարտեզ 9. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի կողմնադրության	95
Քարտեզ 10. Անտառտնտեսության տարածքն ըստ տարիքային խմբերի	96
Քարտեզ 11. Անտառտնտեսության տարածքն ըստ բոնիտետային դասերի	97
Քարտեզ 12. Անտառտնտեսության տարածքն ըստ ծառուտի լրիվության	98
Քարտեզ 13. Անտառտնտեսության տարածքն ըստ հասակային դասերի	99
Քարտեզ 14. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային բուսատեսակներ	100
Քարտեզ 15. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային կենդանիների	101
Քարտեզ 16. Սյունիքի անտառտնտեսության հարակից համայնքները	102
Քարտեզ 17 Անտառտնտեսության ԲԲԱ անտառների	103
Քարտեզ 18. Անտառնտեսության տարածքում հանդիպող պտուղ-հատապտուղները	104
Քարտեզ 19. Անտառտնտեսության տարածքում հանդիպող ուտելի խոտաբույսերը	105
Քարտեզ 20. Անտառտնտեսության և հարակից տարածքների պատմամշակութային հարիուշարձանների	106
Քարտեզ 21. Անտառտնտեսության պահաբաժինները	107
Քարտեզ 22. Անտառտնտեսության տարածքն ըստ հրդեհավտանգության դասերի	108
Քարտեզ 23 Անտառտնտեսության և հարակից տարածքների ճանապարհների	109
Քարտեզ 24 «Գորիսի արգելավայր» ԲՀՊՏ-ի տեղադրությունը	110
Հավելված 2. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր՝ ՊՈԱԿ-ի «Զանգեզուր» արգելավայրի և «Սյունիքի անդառպնդեսության» մասնաճյուղի GIS (ԱՏՀ)	
շերտավոր քարտեզ քարտեզներ	111
Հավելված 3. Տեղեկագիր, ըստ համայնքների, հողերի նպատակային նշանակության բաշխվածությունը մակերեսներով	112

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՌՈՅ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԵՎ ԿԱՊԸ ԱՅԼ ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

Սյունիքի անտառտնտեսության ներկայիս սահմաններում անտառշինական աշխատանքներ առաջին անգամ իրականացվել են 1958 թվականին, հաջորդող անտառշինական աշխատանքները իրականացվել են 1968, 1978, 1989, իսկ վերջին անտառշինությունը 2007 թվականին:

Անտառային կոմիտեի և «Ուայդ Գեյթ» ՍՊԸ միջև 2023թ. հունիսի 15-ին կնքվել է պայմանագիր «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի պատրաստման վերաբերյալ, որի իրականացման ժամկետներն են 2024-2033թթ-երը:

Հիմնադրութային փաստաթղթի մշակման աշխատանքների համառոտ նկարագիրը ներկայացվում է ստորև.

- Սյունիքի նախկին անտառկառավարման պլանների գույքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,
- կիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,
- անտառտնտեսության տարածքում գետերի քանակի և ձգվածության, ջրահավաք ավագանի, լճերի և գրունտային ջրերի մակարդակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- ծրագրի տարածքում բնակչության գբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործման ուսումնասիրություն,
- նախորդ անտառշինության պլանշետների, անտառի պլանների և քարտեզախեմաների ձեռքբերում և ուսումնասիրություն,
- ժամանակավոր օգտագործման հատկացված հողերի քարտեզագրական նյութերի ձեռք բերում և ուսումնասիրություն,
- անտառտնտեսության և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ իրավաբանական ծևակերպումների ուսումնասիրություն,
- անտառսերմնային տեղամասերի, պլանտացիաների և տնկարանային տնտեսության առկայության և վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- հարակից համայնքների հետ անտառշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ:
- անտառգույքագրման մեթոդների և դաշտային գործողությունների ուսուցման նպատակով ծրագրի հիմնական և օժանդակ (տեխնիկական) անձնակազմի համար կազմակերպվել է գործնական ուսուցում:

Անտառի գույքագրման գործողություններն իրականացվել են 2 խմբերով, հիմնական կազմում ընդգրկված են նաև օգնականներ անտառունտեսությունից:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և սահմանազատման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Դաշտային գույքագրման արդյունքները մշակվել են Forest Book համակարգչային ծրագրային ապահովմամբ:

Քարտեզագրական նյութերը մշակվել են օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընծեռնել դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծել բազմանպատակային USGS տվյալների բազա, ինչի շնորհիվ էլ պատրաստվել են թեմատիկ քարտեզներ: Ստեղծված թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է ինֆորմացիայով՝ թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով. ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որն առկա է Forest Book-ի անտառային հատվածային բնութագրերի բազայում:

Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագրեր, որոնք օգտագործվել են թեմատիկ քարտեզների կազմման համար:

Գույքագրման և անտառունտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել և քարտեզները համաձայնեցվել են համայնքների ու անտառունտեսության հետ:

Հիմնադրությային փաստաթյթի առնչությունը այլ փաստաթղթերին ներկայացված է սույն հաշվետվության «Նորմատիվա-իրավական շրջանակ» բաժնում:

ՈՒԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԱԽԱԶԵՌՆՈՂԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաշվետվությունը բաղկացած է ընդհանուր նկարագրական բնույթ ունեցող բաժիններից, ինչպես նաև մասնագիտական նկարագիր ունեցող 9 բաժիններից: Բացի այդ, հաշվետվությունը Հավելվածների տեսքով ներառում է թվով 24 թեմատիկ քարտեզներ, GIS շերտավոր քարտեզներ և հողերի բաշխվածության վերաբերյալ տեղեկագիրը՝ ըստ անտառունտեսության տարածքը ներառող համայնքների:

Հիմնադրութային փաստաթուղթը մշակվել է «Ուայր Գեյթ» ՍՊ ընկերության կողմից (հասցեն՝ ք. Երևան, Զարենցի 4/66), որը ՌԵԴ և փորձաքննական գործընթացի շրջանակներում հանդես է գալիս որպես Նախաձեռնող:

Հիմնադրութային փաստաթուղթի գործողության արդյունքում հնարավոր ազդեցությունների և համապատասխան միջոցառումների մանրամասը նկարագրությունները ըստ թեմատիկ առանձնահատկությունների և ուղղությունների ներկայացված են 4-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ բաժիններում:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱՁՂԹԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԱՌՅԱԼ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԳԱԼԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՂՄԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (ԶԳՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԻՄՆԱՎՈՐԵԼ)

Օրենսդրությամբ սահմանված բովանդակության սույն պահանջը անտառկառավարման պլանների՝ որպես հիմնադրութային փաստաթուղթի, դեպքում կարելի է համարել ոչ կիրառելի, քանի որ նմանատիպ փաստաթուղթները բացառապես միտված են բնապահպանական նպատակների իրականացմանը՝ Շրջակա միջավայրի վրա ակնկալվող դրական ազդեցությամբ:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԱՅԻՆ ՓԱՍՏԱՁՂԹԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԶՐՈՅԱԿԱՆ) ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ և ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Օրենսդրությամբ սահմանված բովանդակության սույն պահանջը անտառկառավարման պլանների՝ որպես հիմնադրութային փաստաթուղթի, դեպքում կարելի է համարել ոչ կիրառելի, քանի որ անտառների երկարաժամկետ արդյունավետ կառավարման տեսանկյունից կառավարման պլանների մշակմանն այլընտրանքային մոտեցումների գործելակերպեր չկան ինչպես ազգային, այնպես էլ միջազգային պրակտիկայում:

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ, ԱՉԳԱՅԻՆ և
ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,
ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ԵՎ ԱՅՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ,
ՈՐՈՆՔ ՀԱՇՎԻ ԵՆ ԱՌՆՎԵԼ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՄՇԱԿԵԼԻՄ**

Օրենսդրությամբ սահմանված բովանդակության սույն պահանջը անտառկառավարման պլանների՝ որպես հիմնադրութային փաստաթղթի, դեպքում կարելի է համարել ոչ կիրառելի, քանի որ անտառկառավարման պլանների մշակման հիմնական նպատակը անտառների երկարաժամկետ արդյունավետ կառավարման տեսլականի սահմանումն է։ Անտառակառավարման պլանը անտառաշինության արդյունքում մշակված և անտառային տնտեսության վարման նպատակով, որոշակի ժամկետով հաստատվող տեխնիկական փաստաթուղթ է՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների ծրագրերով, որոնք միտված են անտառների կայուն կառավարմանը, պահպանությանն ու պաշտպանությանը։

**ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԾԻ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ
ԶԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ՝
ՆԵՐԱՌՅԱԼ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ
ԱՇԽԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ**

Անտառկառավարման պլանով նախատեսված դրույթները կիրառության մեջ են լինելու այդ հիմնադրութային փաստաթղթով սահմանված 10-ամյա ժամանակահատվածում։ Նշված ժամանակահատվածում նախատեսված դրույթների իրագործումը կիրականացվի պլանավորված գործողությունների միջոցով։ Այդ գործողությունները միտված են անտառի պահպանությանը, պաշտպանությանը և արդյունավետ կառավարմանը։ Սահմանված գործողությունների չիրականցումը ուղղակիորեն գրեթե չի առնչվում մարդու առողջությանը (թեև անտառի ոչ արդյունավետ կառավարումը կարող է հանգեցնել անտառային էկոհամակարգերի վիճակի վատթարացման, որն էլ անուղղակիորեն կարող է բացասաբար ազդել ռեկրեացիոն և առողջարարական միջավայրի տարրերի ձևավորման վրա)։ Ինչ վերաբերում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությանը, ապա այդպիսի ազդեցություններ ակնկալվում են ինչպես իրականացման արդյունքում (դրական իմաստով), այնպես էլ չիրականացման հետևանքով (բացասական իմաստով)։

Համապատասխան միջոցառումները, որոնց իրականացումից ակնկալվում են դրական ազդեցությունները, ներկայացված են սույն հաշվետվության 7-9-րդ բաժիններում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ, ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման իրահանգի (2005թ), սահմանված կարգով իրականացվել են տեխնիկական և անտառշինական խորհրդակցությունները:

Առաջին տեխնիկական խորհրդակցությունը կազմակերպվել է Սյունիքի անտառտնտեսության տնօրենի կողմից 2023թ. հունիսի 16-ին անտառտնտեսության գրասենյակում, քննարկվել են նախապատրաստական փուլի աշխատանքները, կայացվել են համապատասխան որոշումներ:

Անտառշինական առաջին խորհրդակցությունը կազմակերպվել է Անտառային կոմիտեի կողմից 2023թ. օգոստոսի 11-ին: Քննարկվել են անտառկառավարման պլանի պատրաստման դաշտային փուլում իրականացվող գործողությունները, խնդիրները, անտառտնտեսության և անտառշինական աշխատանքները իրականացնող կազմակերպության միջև համագործակցությունը ու այլ հարցեր:

2023թ օգոստոսի 2-ին անց է կացվել Երկրորդ տեխնիկական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են անտառշինական դաշտային աշխատանքների կատարման արդյունքները, անտառների վիճակի և անտառտնտեսության վարման նախնական վերլուծությունը, տեղամասերի ցանկը, որտեղ նշանակված են հիմնական անտառտնտեսական միջոցառումներ և այլ խնդիրներ:

Երկրորդ անտառշինական խորհրդակցությունը իրականացվել է անտառկառավարման ծրագրի հիմնական բաժինների մշակման ավարտից հետո՝ 2023թ. նոյեմբերի 29-ին: Քննարկվել են՝

- Անտառային ֆոնդի գնահատման հիմնական ցուցանիշները, առկա փոփոխությունների բնույթը և պատճառները նախորդ ժամանակաշրջանի համար,
- անտառային տնտեսության վարման վերլուծության արդյունքները,
- անտառօգտագործման ծավալները, վայրը, իրականացման եղանակները և մեթոդները, հատումների տնտեսական, անտառագիտական և բնապահպանական հիմնավորումները,
- անտառօգտագործման և անտառվերականգնման միջոցառումների ծավալները,
- անտառսերմնային տնկարանային տնտեսության կազմակերպումը,
- անտառների հակահրեհային և անտառպաշտպանական միջոցառումների ծրագիրը,

- Կողմնարդյունքի (ոչ բնափայտային հումքի պաշարների) գնահատումը:

Բացի վերը ներկայացված խորհրդակցություններն ու հանրային հանդիպումները, ևս մեկ հանրային քննարկումներ կկազմակերպվեն փորձաքննական գործընթացի շրջանակներում՝ շահագրգիռ համայնքների ներգրավմամբ:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետվությունը մշակվել է «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» << օրենքի պահանջներին, ինչպես նաև << կառավարության 21.12.2023 թվականի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման շրջանակներին համապատասխան։ Վերոհիշյալ իրավական փաստաթղթերի մեթոդաբանությունը սահմանում է ՌԵԳ-ի իրականացման փուլային տրամաբանություն, համաձայն որի ՌԵԳ-ը իրականացվում է ստորև թվարկված 3 փուլերով։

- 1) ՌԵԳ շրջանակի որոշում,
- 2) ՌԵԳ հաշվետվության կազմում,
- 3) ՌԵԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրութային փաստաթղթում։
Համաձայն << կառավարության 21.12.2023 թվականի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված կարգի 2-րդ՝ «ՌԵԳ շրջանակի որոշման փուլը» բաժնի 5-րդ մասի 2)-րդ կետի, ՌԵԳ շրջանակի որոշման փուլում պետք է իրականացվի հանրային իրազեկում։ Ակնկալվում է, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը կշրջանառի սույն հաշվետվությունը բոլոր առնչվող շահագրգիռ կառուցների շրջանակներում և նախաձեռնողի հետ միասին կձեռնարկի հանրային իրազեկման գործընթաց։ Շահագրգիռ կառուցների և հանրության կողմից ակնկալվող առաջարկությունների և դիրքորոշումների հիման վրա, ինչպես նաև հանրային իրազեկման արդյունքում ակնկալվող կարծիքները հաշվի առնելով, նախաձեռնողի կողմից կլրամշակվի ՌԵԳ հաշվետվությունը և արդեն իսկ մեկնարկված փորձաքննության շրջանակներում կներկայացվի լիազոր մարմնին՝ շարունակելու փորձաքննական գործընթացը։

Ուազմավարական էկոլոգիական գնահատումն իրականացվել է Վերը Նկարագրված մեթոդաբանությամբ: Գնահատման գործընթացում էական խնդիրներ կամ խոչընդոտներ չեն եղել և տեխնիկական թերություններ չեն արձանագրվել:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությունը մշակելիս տվյալների ձեռքբերման իիմնական աղբյուրը հանդիսացել են հասանելի, բաց աղբյուրները և կառավարման պլանը մշակող ընկերության կողմից տրամադրված տվյալները:

ՆՈՐՄԱՏԻՎԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

(Հիմնադրությային փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ սպորագրված միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը)

ԱԿԴ նախագծման և ՇՄԱՌԵԳ հաշվետվության մշակման համար ուղեցույց են ծառայել ոլորտը կարգավորող հետևյալ իրավական ակտերը՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014 Փոփոխությունները՝ 03.05.2023) - գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, ռազմավարական էկոլոգիական գնահատման և փորձաքննության, անդրասահմանային ազդեցություն ունեցող հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, շահագրգիռ հանրության ծանուցման, հանրային լսումների գործընթացների, պետական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու և այդ գործընթացներին մասնակցող անձանց վրա:

Օրենքը կարգավորում է հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները։ Ներառում է հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի։ Համաձայն օրենքի իրականացվում է փորձաքննություն, որից հետո տրվում է պետական փորձաքննական եզրակացություն։

ՀՀ Անտառային օրենսգիրը (2005թ) - կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները։ Հայաստանի Հանրապետությունում անտառները, անկախ սեփականության ձևից, ըստ իրենց հիմնական նպատակային նշանակության՝ դասակարգվում են՝ պաշտպանական նշանակության, հատուկ նշանակության, արտադրական նշանակության։

ՀՀ Հողային օրենսգիրը (2001թ) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպատ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը։

«ՀՀ ջրային օրենսգիրը» (2002թ) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական իիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ) - սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության իիմքերը ՀՀ տարածքում՝ պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006թ) - կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական իիմունքները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ) - նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բուսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ) - նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ) – կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համայիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգերը և այլն:

«Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքը (2001թ) - կարգավորում է հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման հիմնական ուղղությունների, հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում կարգավորման սկզբունքների և դրանց իրականացման մեխանիզմների սահմանումը, Հայաստանի Հանրապետության բնակչությանը որակյալ և հուսայի հրդեհային պահպանության ապահովումը:

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրծատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը - սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն ՀՀ կառավարության որոշում – սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:
«Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին» 2005 թվականի հուլիսի 21-ի N 1232-Ն ՀՀ կառավարության որոշումը - սահմանում է Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրի հիմնական նպատակը՝ անտառային էկոհամակարգերի պահպանությունը, դեգրադացված

անտառային էկոհամակարգերի վերականգնումը, անտառային պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործումը և անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովումը:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» 2002 թվականի ապրիլի 20-ի N 438

ՀՀ կառավարության որոշումը – սահմանում է, որ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

«Հայաստանի Հանրապետության պետական անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» 1998 թվականի սեպտեմբերի 19-ի N 589 **ՀՀ կառավարության որոշումը**-սահմանում է հրդեհային անվտանգության կանոնները անտառներում և հատուկ պահպանվող տարածքներում:

«Անտառային ծառատեսակների հատման տարիքը սահմանելու մասին» 2005 թվականի սեպտեմբերի 15-ի N 1546-Ն **ՀՀ կառավարության որոշումը** – սահմանում է թե անտառվերականգնման հատումներ իրականացնելիս ինչպես են որոշում ծառատեսակների հատման տարիքը:

«Արտադրական նշանակության անտառներում անտառավերականգնման հատումների իրականացման կարգը սահմանելու մասին» 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1412-Ն **ՀՀ կառավարության որոշումը**- սահմանում է արտադրական նշանակության անտառներում անտառավերականգնման հատումների իրականացման պայմանները:

«Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն **ՀՀ կառավարության որոշումը** -սահմանում է պետական անտառները և անտառային հողերի օգտագործման տալու (տրամադրելու) կարգը, սահմանում է , թե դրանք ում կողմից և ինչ հիմունքներով են տրվում:

«Պաշտպանական նշանակության անտառներում անտառօգտագործման եվ պահպանության կարգը սահմանելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1316-Ն **ՀՀ կառավարության որոշումը** -սահմանում է պաշտպանական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության առանձնահատկությունները:

«Անտառային պետական կադաստրի վարման և անտառների պետական հաշվառման ու տվյալների տրամադրման կարգը սահմանելու մասին» 2008 թվականի փետրվարի 7-ի N 133-Ն **ՀՀ կառավարության որոշումը** -սահմանում է անտառային պետական կադաստրի վարման կարգը, որն անտառների, անտառապատման, անտառների օգտագործման, պահպանության, պաշտպանության, վերականգնման, նպատակային և գործառնական նշանակության, ինչպես նաև անտառային տնտեսությունների ու անտառային տնտեսության վարման, անտառային

հողերի և անտառների որակական, քանակական ու տնտեսական բնութագրերի գնահատման մասին փաստաթղթային տվյալների համակարգված մուտքագրումն է՝ շտեմարանի ստեղծմն համար:

«Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվները հաստատելու մասին» 2013 թվականի հունիսի 27-ի N 684-Ն «Հայաստանի Հանրապետության որոշումը -սահմանում է պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվները:

ԱԿԴ Նախագծման և ՇՄԱՌԵԳ հաշվետվության մշակման համար ուղեցույց են ծառայել նաև ստորև ներկայացված միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրերը, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

N	Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ ե մտել	Ստորագրվել է	Վավերացվել է
1	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1998	1992	1998
2	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգեն, 2000)	2004թ	2000թ	2004թ
3	Կիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)	1994թ	1992թ	1993թ
4	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1997թ	1994թ	1997թ
5	Լանդշաֆտների և վրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա, 2000)	2004	2000	2004

6	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)	1993թ	1972թ	1993թ
7	Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1992)	2008թ	1979թ	2008թ
8	ՄԱԿ-ի ԵՏՀ , Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին և կոնվենցիա (Օրիուս 1998թ.)	2001	1998	2001
9	, Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին և արձանագրություն (Կիև 2003թ.)	2011	2003	2010

Բաժին 1 ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՍ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՃՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. ԱՆՏԱՌՈՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սյունիքի անտառատնտեսություն» մասնաճյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում՝ Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի վարչական սահմաններում։ Անտառատնտեսության գրասենյակը գտնվում է Գորիս քաղաքում, Երևանից 237կմ հեռավորության վրա։ Անտառատնտեսության տարածքի ծգվածությունը հյուսիսից հարավ 48կմ է, արևելքից արևմուտք՝ 40կմ։

Անտառատնտեսությունը հյուսիսից սահմանակցում է Գորիսի ենթաշրջանի համայնքային հողերին, հարավից Կապանի ենթաշրջանի համայնքային հողերին, արևմուտքից Սիսիանի անտառատնտեսությանը և ամառային արոտավայրերին (Քարտեզ 1)։

1.2. Տարածքի կազմավորումը

Սյունիքի անտառատնտեսությունը կազմավորվել է։ Անտառային տնտեսության գլխավոր վարչության կազմում՝ Հայկական ՍՍՀ Գյուղատնտեսության նախարարի 21.07.1954թ. №37 հրամանով, Կապանի անտառատնտեսությունից առանձնացված 11960հա ընդհանուր մակերեսի վրա կազմավորվել է Գորիսի անտառատնտեսությունը երեք անտառապետություններով՝ Գորիսի անտառապետությունը՝ 4442հա մակերեսով, Շուռուկի անտառապետությունը՝ 3258հա և Արծվանիկի անտառապետությունը՝ 4260հա մակերեսով։ Հայկական ԽՍՀ Անտառային տնտեսության պետական կոմիտեի 27.09.1958թ. №4 հրամանի համաձայն Գորիսի անտառատնտեսությունը վերակազմավորվել է անտառարդտնտեսության, որի կազմում կազմավորվել է Սիսիանի անտառապետությունը ընդհանոր 3520հա մակերեսով։ Գորիսի նախկին վարչական շրջանի կոլխոզ-սովխոզային հողերից անտառապատման նպատակով անտառատնտեսությանը միացված տարածքների հետ միասին Գորիսի անտառատնտեսության ընդհանուր մակերեսը 01.01.1968թ. կազմել է 15694 հեկտար։

Հայկական ԽՍՀ Անտառային տնտեսության պետական կոմիտեի 14.01.1971թ. №26 հրամանի համաձայն անտառատնտեսության կազմից դուրս է բերվել Սիսիանի անտառապետությունը, որի հենքի վրա կազմավորվել է Սիսիանի անտառատնտեսությունը 3520հա ընդհանուր մակերեսով։

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 27.07.2021թ թիվ 01-09/193 գրության համաձայն, Սյունիքի (Գորիսի) անտառատնտեսության կազմից Արծվանիկի անտառապետությունը հանվել և ընդգրկվել է Կապանի անտառատնտեսության կազմում։

Ներկա անտառշինությամբ անտառատնտեսության ընդհանուր մակերեսը կազմում է 13514,0հա։

1.3. Անտառտնտեսության կառուցվածքը և փոփոխությունը

2021 թվականից անտառտնտեսությունը կազմված է երկու անտառպետություններից. Գորիսի՝ 8187հա մակերեսով (60,6%), և Շուշնուլիսի՝ 5327հա (39,4%) մակերեսով (Աղյուսակ 1, 2, Քարտեզ 2):

Աղյուսակ 1. «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի կառուցվածքը

№	Անտառպետության անվանումը	1989		2007		2023թ	
		հա	%	հա	%	հա	%
1	Գորիսի	5128	37,7	6919	41,9	8187,0	60,6
2	Շուշնուլիսի	4676	34,3	5181	31,3	5327,0	39,4
3	Արծվանիկի	3816	28,0	4430	26,8	-	
	Ընդամենը	13620	100	16530	100	13514,0	100

Աղյուսակ 2. Սյունիքի անտառտնտեսության քառակուսիների համարակալման և մակերեսների փոփոխության ամփոփ տեղեկագիր՝ ըստ անտառպետությունների

Անտառպետություն	2007		2023		Տարրերություն	Բացատրություն
	Քառակուսու համարը,	Մակերեսը, հա	Քառակուսու համարը,	Մակերեսը, հա		
Գորիսի	1	93	1	137	44	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	2	162	2	157	-5	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	3	138	3	174	36	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	4	221	4	225	4	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	5	62	5	122	60	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	6	133	6	147	14	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	7	91	7	84	-7	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման, այդ թվում մոտ 2,4հա նախկինում անտառային տարածքի օտարման արդյունք
	8	93	8	105	12	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	9	139	9	169	30	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	10	161	10	86	-75	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	11	204	11	261	57	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	12	158	12	171	13	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	13	104	13	103	-1	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	14	52	14	70	18	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	15	102	15	116	14	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	16	95	16	99	4	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	17	80	17	72	-8	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	18	164	18	144	-20	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով

Անուագործական դիմում	2007		2023		Տարբերություն	Բացահայտություն
	Քառակիրար համարը,	Մակերես, հա	Քառակիրար համարը,	Մակերես, հա		
Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք	47	125	47	117	-8	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	48	117	48	178	61	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	49	55	49	112	57	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	50	162,2	50	332	169,8	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	51	86	51	68	-18	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	52	117,8	52	100	-17,8	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	53	103	53	388	285	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	54	121	54	73	-48	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	55	163	55	105	-58	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	56	61	56	79	18	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	57	153	57	191	38	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	58	84	58	71	-13	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	59	448	59	666	218	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	60	169	60	254	85	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
Ընդամենը	6919	1830	8187	1268		
Վերաբերություններ պահանջման կամ առանձին պահանջման դիմումների հետ	1	175	1	165	-10	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	2	161	2	166	5	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	3	185	3	168	-17	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	4	120	4	123	3	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	5	86	5	75	-11	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	6	180	6	188	8	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	7	49	7	176	127	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	8	134	8	209	75	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	9	131	9	133	2	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	10	111	10	141	30	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	11	125	11	192	67	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	12	104	12	104	0	
	13	108	13	107	-1	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք
	14	143	14	155	12	Կադաստրային քարտեզների և արբանյակային լուսանկարների միջոցով տարածքի ճշտման արդյունք

Անտառապիտույն	2007		2023		Տարբերություն	Բացիկանացման դաշտ
	Քառակուսի համարը,	Մակերեսը, հա	Քառակուսի համարը,	Մակերեսը, հա		
Ընդամենը	5181		5327	146		
Ամբողջը	12100		13514	1414		

1.4. «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի սահմանները

Անտառտնտեսության տարածքները գտնվում են Գորիս, Տաթև և Տեղ խոշորացված համայնքների վարչական սահմաններում: Անտառտնտեսության ներքին սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահմաններ՝ օգտագործելով երկրակապակցման համակարգեր, արբանակային պատկերներ և տեղագրական քարտեզներ:

1.5. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր

«Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառները գտնվում են Հայաստանի հարավային անտառաճման շրջանում և տեղաբաշխված են Փոքր Կովկաս լեռնահամակարգի Զանգեզուրի լեռնաշղթայի լեռնաբազուկների վրա:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ՝ ընդգրկելով Որոտան գետի և նրա վտակների ջրահավաք ավազանները, ինչպես նաև լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն, անկախ կողմնադրություններից, գերակշռող են 25° -ից բարձր թեքության լանջերը: Մինչև 15° թեքությունների վրա գտնվում է ընդհանուր տարածքի ընդհամենը 2,4%-ը, իսկ $9,9\%-ը$ 35° -ից բարձր թեքությունների վրա: Ըստ ռելիեֆի առաջացման առանձնացվում են կազմաբանական հետևյալ շրջանները՝

- Մինչև ԾՄ 1200 մ բարձրության ցածր ժայռոտ լեռների շրջան,
- 1200-1750մ խիստ մասնատված միջին լեռների ժայռոտ շրջան,
- 1750-2250մ մասնատված սարահերթերի շրջան,
- 2250 – 3250 ԾՄ բարձր մասնատված խիստ կտրտված մեծ թեքության լեռների շրջան:

Որոտանի ձախափնյա տարածքներն առավել անտառապատ են, սարահարթը նկատելի դարավանդային կառուցվածք ունի, դեպի Որոտան գետը իջնում է խիստ կտրտված և մեծ բարձրության ժայռերով: Գետի ավազանը բնութագրվում է քարակոների, հրաբխային խարամների զարգացմամբ, դրանք բնական հուշարձաններ են: Որոտանի ձախ ափին տեղաբաշխված են Բարգուշատի լեռնաշղթայի

լեռնաբազուկները, դրանք տարածվում են հյուսիս-արևմտյան ուղղությամբ: Երկրաբանական տեսանկյունից անտառտնտեսության տարածքը գոտևորող լեռներն ունեն տեկտոնական ծագում, լեռնաշղթաներն իրենց գագաթներով հիմնականում ժայռոտ են՝ բնորոշ ջանգեզուրի լեռնաշղթային (Քարտեզ 3):

Սյունիքի անտառտնտեսության տարածքի և ընդհանրապես լեռնային ծագման հողերի կազմավորման պրոցեսում կարևոր դեր են խաղում տոպոգրաֆիական պայմանները, որին համապատասխան հաճախակի փոփոխվում է հողերի հիդրոլոգիական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, հողակազմավորման ընթացքի տարրերության, հողերի բազմազանության բնութագրի, նրանց զարգացման և ֆիզիկական ու մեխանիկական կազմի վրա:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը:

Սյունիքի անտառտնտեսության տարածքի և ընդհանրապես լեռնային ծագման հողերի կազմավորման պրոցեսում կարևոր դեր են խաղում տոպոգրաֆիական պայմանները, որին համապատասխան հաճախակի փոփոխվում է հողերի հիդրոլոգիական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, հողակազմավորման ընթացքի տարրերության, հողերի բազմազանության բնութագրի, նրանց զարգացման և ֆիզիկական ու մեխանիկական կազմի վրա:

Անտառշինության ընթացքում հողային հատուկ ուսումնասիրություններ չեն կատարվել և հողերի նկարագրման ժամանակ օգտվել ենք <<Գյուղատնտեսության նախարարության հողագիտության և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի>>, Սյունիքիի տարածաշրջանում կատարած հողագիտական ուսումնասիրություններից և Հանրապետության հողային քարտեզագրական նյութերից, համաձայն որոնց անտառտնտեսության տարածքում հողածածկը հիմնականում կազմված է գորշ հողերից, գերակշռում են դարչնագույն լեռնանտառային հողատեսքերը՝ համապատասխան ենթատիպերով: Մեխանիկական կազմի տեսանկյունից առավելապես տարածված են կավային խառնուրդով հողերը:

Թույլ զարգացած հողատեսքերը առավելապես տարածված են Ողջի գետի վերին հատվածներում, իսկ ուժեղ կմախքային հողերը՝ հիմնականում արևմտյան դիրքադրությունների թեք լանջերում և որպես օրինաչփություն նման հողերում աճում են առավել քսերօֆիտային և ցածր բոնիտետային դասերի ծառությունները:

1.6. Կիմա

Հայաստանի տարածքը աչքի է ընկնում բնակիմայական պայմանների մեջ բազմազանությամբ: Անտառտնտեսության կլիմայական պայմանները փոփոխվում են

կախված ուղղաձիգ գոտիականությունից, ընդ որում լեռնալանջերի ստորին մասերում այն չափավոր տաք է, ավելի վեր՝ չափավոր ցուրտ:

Համաձայն Հայաստանի ազրոկլիմայական տեղեկագրի՝ Հանրապետությունում առանձնացվում են 11 ազրոկլիմայական գոտիներ: Սյունիքի անտառունտեսության տարածքը գտնվում է մասամբ 5-րդ, 6-րդ, 11-րդ (չափավոր շոգ, անբավարար խոնավությամբ և չափավոր տաք, խոնավ) և, հիմնականում, 7-րդ (անտառային) ազրոկլիմայական գոտիներում:

5-րդ և 6-րդ գոտիները գտնվում են հիմնականում 800-1400մ բարձրություններում: Այս գոտիների կլիմայական պայմանները թույլ են տալիս առանց հատուկ տեխնոլոգիաների իրականացնել անտառունկման աշխատանքներ, որտեղ էլ նախկինում իրականացվել են անտառունտեսության անտառունկումների մեծ մասը:

11-րդ գոտին գտնվում է ծովի մակերևույթից 2500մ-ից բարձր, առանձնանում է խիստ կլիմայով և ընդգրկում է բարձր լեռնային ալպիական արոտավայրերը:

7-րդ՝ չափավոր խոնավ գոտին ընդգրկում է 1400-2000 ԾՄ բարձրությունները: Զմեռը երկարատև է, կայուն ձնածածկույթով, գերիշխում է բարեխառն սառնամանիքային եղանակը, գարունը երկարատև է, սառը և խոնավ, ամառը բարեխառն տաք է, իսկ աշունը մեղմ է: Այս գոտին հիմնականում համընկնում է անտառունտեսության բնական տնկարկների տարածքների հետ:

Վեգետացիոն ժամանակաշրջանն անտառունտեսության ստորին շրջաններում սկսվում է մարտի սկզբին, իսկ վերին շրջաններում՝ շուրջ երկու տասնօրյակ անց:

Աշնանային առաջին ցրտահարություններն անտառունտեսության վերին սահմաններում սկսվում են սեպտեմբերի երկրորդ տասնօրյակից, իսկ ստորին սահմաններում՝ նոյեմբերի առաջին տասնօրյակից: Գարնանային վերջին ցրտահարությունները դիտվում են միջև համապատասխանաբար մայիսի առաջին տասնօրյակ և ապրիլի առաջին տասնօրյակ:

Կայուն ձնածածկույթ անտառունտեսության ստորին շրջաններում դիտվում է ձմեռների 50%-ից պակաս դեպքերում, իսկ վերին շրջաններում դեկտեմբերի սկզբից, և պահպանվում է մինչև մայիսի երկրորդ տասնօրյակը: Զնածածկույթի հզորությունը վերին շրջաններում տասնօրյա մաքսիմումով կարող է հասնել 90-100սմ-ի:

Գրունտի սառեցման առավելագույն խորությունը անտառունտեսության ստորին սահմանից դեպի վեր փոխվում է 5սմ-ից մինչև 30սմ:

Ամռանը գերակշռում են հարավային և հարավ-արևելյան քամիները (65%), ձմռանը՝ հյուսիս-արևելյանը (50%): Հովհանն բազմամյա միջին արագությունը մինչև 1մ/վ է, հունվարին՝ 2մ/վ-ից ավելի:

Օդի հարաբերական խոնավության տարեկան միջինը անտառշինությունն իրականացման տարում ըստ «Գորիս» օդերևութաբանական կայանի կազմել է 71%, ամենացածրը հունվարին և դեկտեմբերին 65%, ամենաբարձրը՝ սեպտեմբեր-հոկտեմբերին՝ 77%, իսկ ամենատաք ամսվա միջին ամսական խոնավությունը ժամը 1500-ին՝ 55%: Ընդհանուր առմամբ անտառաճման պայմանները նպաստավոր են ոչ

Քիչ քանակության ծառաթփատեսակների աճեցման և բնական վերականգնման համար:

Ստորև ներկայացվում է «Գորիս» օդերևութաբանական կայանից ստացված որոշակի օդերևութաբանական տվյալներ: Տվյալները երկարաժամկետ վերլուծությունների նպատակ չեն հետապնդում, այլ բերվում են վերջին տարիներին կլիմայական պատկերի մասին գաղափար կազմելու համար (Այուսակ 3):

Այուսակ 3. «Գորիս» օդերևութաբանական կայանի տվյալների կլիմայական բնութագիրը 2021-2022 թթ

Օդի դիտված առավելագույն ջերմաստիճանը (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	առավել.
2021	18,5	17,4	16,4	25,5	29,0	30,8	32,8	30,8	34,0	25,0	21,7	17,4	34,0
2022	15,8	15,9	17,2	24,4	24,2	31,4	30,6	30,8	33,0	27,3	21,5	15,2	33,0
Օդի դիտված նվազագույն ջերմաստիճանը (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	նվազ.
2021	-11,5	-9,2	-12,8	1,0	2,0	11,3	11,4	11,0	4,8	-2,6	-4,8	-9,5	-12,8
2022	-11,7	-6,3	-9,5	-0,5	4,8	11,2	11,6	10,7	6,8	1,4	-1,5	-5,9	-11,7
Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճան (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
2021	3,7	3,8	2,9	12,7	15,0	20,1	20,5	21,1	15,3	7,6	6,6	3,5	11,1
2022	0,6	3,1	0,8	11,7	11,4	19,1	19,9	21,0	17,0	11,5	6,6	0,3	10,2
Ամսական և տարեկան տեղումների քանակը (մմ)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
2021	40,9	30,5	107,5	40,8	137,0	4,2	14,3	38,9	36,7	104,9	33,8	9,3	598,8
2022	36,3	13,0	95,4	22,7	192,4	52,2	1,2	6,8	25,6	25,1	11,5	15,9	498,1

1.7. Բուսական և կենդանական աշխարհ

Սյունիքի անտառատնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից բարձրությամբ:

Անտառային համակեցություններում բացարձակ գերակշռում են բոխիկաղնուտային և կաղնի-բոխուտային համակեցությունները, որոնց կազմերում հիմնականում հանդիպում են թխկի, թեղի, հացենի:

Բոխու գերակշռությամբ ծառուտները հիմնականում զբաղեցնում են լեռնալանջերի միջին բարձրության հատվածները, իսկ ավելի ցածր լեռնային գոտում անտառային բուսականությունը հիմնականում ներկայացված է ցածրաբուն կաղնու ծառուտներով, որոնց կազմում զգալի մասնակցություն ունեն սրսպտուղ և սովորական հացենիները, վրացական և դաշտային թխկիները:

Թփերից ավելի հաճախ հանդիպում են շլորենին, սգնենին, մասրենին: Բացատներում և անտառի ենթանտառում թփերից հանդիպում են ցախակեռաս, մասրենի, հոնի, զկուենի, կտտկենի:

Տարածքի անտառշրջանացման առանձնահատկություններից է հաճարենու ժառուտների բացակայությունը:

Բավականին բազմազան և հարուստ է կենդանական աշխարհը, որին նպաստում են լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, աղբյուրների առատությունը և Արաքսի ավազանի մոտիկությունը:

Բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն բերված է բաժին 4-ում (**Կենսաբազմազանության պահպանություն**):

1.8. Զրագրություն

Անտառունտեսության տարածքը պատված է մանր գետակների և գետերի ցանցով: Բոլոր գետերը և գետակներն ունեն լեռնային բնույթ, սնվում են ստորգետնյա, ձնհալքերի և աղբյուրների ջրերով: Դրանք իրենցից ներկայացնում են տիպիկ լեռնային, արագ հոսքով գետեր, որոնք պարունակում են մեծ քանակությամբ քարեր և ավազներ: Գլխավոր գետը Որոտանն է, սկիզբ է առնում ԾՄ 3045մ բարձրությունից, որի ավազանում տեղաբաշխված են անտառունտեսության անտառների հիմնական մասը (Քարտեզ 4): Որոտանի վրա կառուցված է տարածաշրջանի ամենահզոր՝ Տաթև ՀԷԿ-ը:

Այլուսակ 4 Գետերի և ջրամբարների բնութագիրը

№	Գետի անվանումը	Ուր է թափվում գետը	Երկարությունը	Լայնությունը, մ	Խորությունը, մ	Ոլորայնության գործակիցը	Ջրային տրանսպորտի համար պիտանելիությունը
1	Որոտան	Արաքս	75	10-20	0,5-2	1,6	ոչ պիտանի
2	Գորիս	Որոտան	15	3-4	0,3-1	1,5	ոչ պիտանի
3	Շաքարաջուր	Որոտան	28	2-4	0,3-0,5	1,7	ոչ պիտանի
4	Տաթև	Որոտան	5		0,3-0,5	1,2	ոչ պիտանի

Բաժին 2. ԿԵՆՍԱԲԱԶՄԱՉԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Հայաստանի տարածքում աճում են շուրջ 3800 տեսակ անոթավոր բույսեր, 428 հողային և ջրային ջրիմուներ, 399 մամուռներ, շուրջ 4500 սնկեր, 464 քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակ անողնաշար կենդանիներ: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են 452 տեսակ, որը կազմում է ամբողջ ֆլորայի 11,89%-ը:

Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր:

Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000կմ² տարածքում աճում է մոտ 107 տեսակ: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված է սննդային, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ է կոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այդ տեսակետից Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունն ապահովող բարձր հատկանիշներ, միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը:

Գորիսի տարածաշրջանը առանձնանում է կենսաբազմազանության բարձր պոտենցիալով:

2.1 Ֆլորա

Անոթավոր բույսեր

Նկարագրություն

Սյունիքի անտառունտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերի 91 ընտանիքի և 303 ցեղի պատկանող 488 տեսակ: Անտառունտեսության տարածքում աճող բույսերից 13 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (այդուակ 5, քարտեզ 14):

Այդուակ 5 Սյունիքի անտառունտեսության տարածքում աճող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ բուսատեսակները

№	Տեսակի լատիներեն անվանումը	Տեսակի հայերեն անվանումը	Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի
1.	Galanthus artjuschenkoae Gabrielian	Ձնծաղիկ Արտյուշենկոյի	VU
2.	Amygdalus nairica Fed. et Takht.	Նշենի նախրյան	EN
3.	Lathyrus setifolius L.	Տափոլող խոզանատերև	VU

№	Տեսակի լատիներեն անվանումը	Տեսակի հայերեն անվանումը	Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի
4.	<i>Onobrychis meschetica</i> Grossh.	Կորնգան մեսխետական	CR
5.	<i>Iris lineolata</i> (Trautv.) Grossh.	Հիրիկ նեղգծային	EN
6.	<i>Botrychium lunaria</i> (L.) Sw.	Ողկուզապտեր կիսալուսնածն	VU
7.	<i>Orchis punctulata</i> Steven ex Lindl.	Խոլորձ կետավոր	VU
8.	<i>Crataegus tournefortii</i> Griseb.	Սղնի Տուրնեֆորի	VU
9.	<i>Crataegus ulotricha</i> Pojark.	Սղնի գանգրամազիկավոր	CR
10.	<i>Psephellus zangezuri</i>	Պսեֆելլուս Զանգեզուրի	EN
11.	<i>Crataegus tournefortii</i>	Ալոճ Տուրնեֆորի	VU
12.	<i>Astragalus agasii</i>	Գագ Աղասու	CR
13.	<i>Onobrychis meschetica</i>	Կորնգան մսխեթական	CR

Սյունիքի անտառատեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (98 տեսակ), մեղրատու (110), դեղատու (202), կերային (110) նշանակության տեսակները:

Դեռևս անբավարար են ուսումնասիրված օգտակար տեսակների պաշարները, որոնց մասին առայժմ գրառումները կարելի է սահմանափակել «առատ» կամ «հաճախ հանդիպող» գնահատականներով:

Հիմնական վրանգներ

Հիմնական վրանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը: Վերջին ժամանակնորում մեծ վտանգ է ներկայացնում սահմանին ընթացող ռազմական գործողությունները:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը, օրինակ՝ *Ailanthus altissima* (այլանթ բարձրաբուն), *Robinia pseudacacia* (ակացիա սպիտակ), *Silybum marianum* (տատասկափուշ) և այլն:

2.2 Ֆաունա

Սյունիքի մարզը, որտեղ գտնվում է Սյունիքի անտառատեսության տարածքը, ունի բնության հատուկ պահպանվող տարածքների բավականաչափ զարգացած և խիտ ցանց: Սյունիքի անտառատեսության տարածքը ընդգրկված է Որոտան գետի և նրա Վարարակ, Քաշունի, Զրաղացիձոր, Քարահանուտ, Աղանձուգետ վտակների անտառային տարածաշրջանի մեջ և աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ

գոտիականությամբ ու ռելիեֆի խայտաբղետությամբ, որն էլ բնորոշում է նրա բուսական և կենդանական աշխարհի հարուստ կենսաբազմազանությունը:

ՀՀ Կառավարության 19 դեկտեմբերի 2013 թվականի N 1465-Ն որոշմամբ ստեղծվել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը, որը իրականացնում է պահպանության աշխատանքներ 79038,8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում: Հարկ է նշվել, որ այդ տարածքներում կենսաբազմազանության վերաբերյալ տեղեկատվությունը շատ կարևոր է անտառունտեսության կենդանական աշխարհի պահպանության խնդիրները վերլուծելու և համապատասխան միջոցառումների մշակելու ժամանակ:

Տարածաշրջանում հայտնի է ընդհանուր առմամբ 351 անողնաշար կենդանիների տեսակներ, այդ թվում 41 տեսակի փափակամարմիններ և 310 տեսակի միջատներ, ընդ որում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված 1 տեսակի խխունջ և 10 տեսակի միջատներ, ինչպես նաև 4 տեսակի էնդեմիկ փափակամարմիններ ու միջատների 14 էնդեմիկ տեսակ և ենթատեսակ (3-ը ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում):

Ձկնաշխարհը ներկայացված է 4 ձկնատեսակով, որոնք են կարմրախայտը (*Salmo trutta fario*), կուրի բեղաձուկը (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*), Սևանի կողակը (*Capoeta sevangi*) (VU):

Համեմատաբար հարուստ է սողունների ֆաունան, որը ներկայացված է 23 տեսակներով: Մողեսներից սովորական են դեղնափորիկը (*Pseudopus apodus*), իլիկամողեսը (*Anguis fragilis*), Ռադդեի ժայռային մողեսը (*Darevskia raddei*), միջին մողեսը (*Lacerta media*), բարեկազմ օձագլուխը (*Ophisops elegans*): Օձերից հանդիպում են որդանման կույր օձը (*Typhlops vermicularis*), արևմտյան վիշապիկը- (*Eryx jaculus*), կարմրափոր սահնօձը (*Hierophis schmidti*), քառաշերտ սահնօձը- (*Elaphe sauromates*), գյուլբան (*Macrovipera lebetina*):

Հայաստանում գրանցված թռչունների 345 տեսակներից 134-ին կարելի է հանդիպել, որոնցից 59-ն այստեղ են բնակվում միայն ամռանը, մոտ 67-ը՝ մշտապես, 10-ը՝ չվող են կամ այստեղ են գալիս ձմռանը, ընդ որում թռչուններից 23 տեսակ ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում իսկ 6 – ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Առավել հարուստ են ժայռոտ և քարքարոտ տեղանքները: Այստեղ, առավել քան Հայաստանի այլ տարածքներում, ներկայացված են վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*) (VU), ալպիական ճայը (*Pyrrhocorax graculus*) (EN) և կարմրաթև մագլուղը (*Tichodroma muraria*) (DD), ինչպես նաև մորուքավոր անգղողը (*Gypaetus barbatus*) (VU), քարարծիկը (*Aquila chrysaetos*) (VU), սապսանը (*Falco peregrinus*) (VU), բվեճը (*Bubo bubo*) (VU), ալպիական նրբագեղիկը (*Prunella collaris*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*) և ծյան ճնճղուկը (*Montifringilla nivalis*):

Կաթնասուններից հանդիպում են՝ Եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), ծնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), աղվեսը (*Vulpes vulpes*), տափաստանային

կատուն (*Felis silvestris ornata*), անտառային կատուն (*Felis silvestris silvestris*), քարակզաքսը (*Martes foina*), գորշուկը (*Meles canescens*) և աքիսը (*Mustela nivalis*): Բավականին հաճախ գրանցվում է գայլը (*Canis lupus*):

Սպառնացող հիմնական վտանգը չհամակարգված հատումներն են, պատահում են նաև որսագողության դեպքեր:

Սյունիքի անտառատնտեսության և շրջակա տարածքներում հանդիպող ՀՀ Կարմիր գրքի կենդանիների ցանկ՝ Սեղմված խխունջ - *Musculium strictum*, Վան Բրինկի նետիկ - *Coenagrion vanbrinkae* Lohmann, Ֆիտոնդրիմադուզա հայկական - *Phytodrymadusa armeniaca* Ramme, Ֆալետիի կողնջակեր ցայտազնայուկ - *Procerus scabrosus fallattianus* Cavazzutti, Երկգիծ երկարաբեղիկ - *Dorcadion bistriatum* Pic, . Գորբունովի երկարաբեղիկ - *Dorcadion gorbunovi* Danilevsky, Պրոզերափնա իլիկաթթեռ - *Proserpinus proserpina*, Ավետյանի երկրաչափ թիթեռ - *Cidaria avetiana* Wardikian, Միջերկրածովային կրիա - *Testudo graeca*, *Linnaeus*, Անդրկովկասյան սահնօծ - *Zamenis hohenackeri*, *Strauch*, Կովկասյան կատվաօծ - *Telescopus fallax*, *Fleschmann*, Հայկական իժ կամ Ռադդեի իժ - *Vipera (Montivipera) raddei*, Գառնանգղ (մորուքավոր անգղ) - *Gypaetus barbatus*, *Linnaeus*, Գիշանգղ - *Neophron percnopterus*, *Linnaeus*, Սպիտակագլուխ անգղ - *Gyps fulvus*, Օձակեր արծիվ - *Circaetus gallicus*, Եվրոպական ճնճղաճուռակ - *Accipiter brevipes*, Տախաքրիրավոր - *Accipiter gentilis*, *Linnaeus*, Տափաստանային արծիվ - *Aquila nipalensis*, Քարարծիվ - *Aquila chrysaetos*, Գաճաճ արծիվ - *Hieraaetus pennatus*, Կովկասյան մարեհավ - *Tetrao mlokosiewiczi*, Վայրի հնդկահավ (Ուլար) - *Tetraogallus caspius*, Կիսասպիտակավիզ ճանճորս - *Ficedula semitorquata*, Ներկարար - *Coracias garrulus*, Լայնականջ ոզնի Շելկովնիկովի Կուտորա - *Neomys schelkovnikovi* Sat., Հարավային պայտաքիթ - *Rhinolophus euryale*, Մեհելիի պայտաքիթ չղջիկ - *Rhinolophus mehelyi*, Սովորական երկարաթև չղջիկ - *Miniopterus schreibersi*, Բեխշտեյնի գիշերաչղջիկ - *Myotis bechsteinii*, Ասիական լայնականջ չղջիկ - *Barbastella leucomelas*, Հնդկական վայրենակերպ կամ մացառախող - *Histrix indica* Kerr, Հայկական մկնիկ - *Sicista armenica* Sokolov et Baskevich, Անդրկովկասյան գորշ արջ - *U. a. Syriacus*, Զրասամոյր - *Lutra lutra* *Linnaeus*, Անտառակատու - *Felis silvestris* Schreber, Կովկասյան ընձառյուծ *Panthera pardus ciscaucasica*, Բեզոարյան այծ - *Capra aegagrus*,

Հայկական մոլֆլոն - *Ovis*, Կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ, *Cervus elaphus maral* Gra (Քարտեզ 15):

2.3 «Գորիսի» պետական արգելավայր

Արգելավայրը ստեղծվել է 1972 թվականին Որոտան գետի հովտում՝ ծովի մակարդակից 700-2800 մետր բարձրությունների վրա, ընդհանուր մակերեսը 1850 հա: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի՝ հիմնականում այժյամ, բճավոր եղջերու, գորշ արջ պահպանության նպատակով:

Արգելավայրում սահմանված է պահպանման ռեժիմ՝ համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքի» դրույթների:

Գույքագրման և գնահատման արդյունքներով արգելավայրի տարածքի տարածման բնական սահմանների ճշտման հիմնավորմամբ դարձել է 1930հա՝ ներառելով Գորիսի անտառապետության 30-48 քառակուսիները: Ստորև ներկայացվում է արգելավայրի վիճակը բնութագրող աղյուսակներ (Աղյուսակ 6-9):

Աղյուսակ 6. Արգելավայրի հողատեսքերը

№	Հողատեսքը	մակերես	%
1.	Ընդհանուր	1930	
2.	Անտառածածկ, ընդամենը	1497,5	77,6
2.1	Այդ թվում անտառմշակույթներ	1,9	
3.	Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ		
4.	Ոչ անտառածածկ, ընդամենն, այդ թվում	110,8	5,7
4.1	Նոսրուտներ	62,3	
4.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	48,5	
4.3	Մահացած տնկարք		
5.	Ոչ անտառային հողեր	321,7	16,7
5.1	Պտտատու այգի		
5.2	Արոտավայր	7,6	
5.3	Խոտհարք	1,4	
5.4	Այլ հողեր	312,7	

Արգելավայրի անտառածածկի միջին կազմը հետևյալն է՝ 4,9կաղնի, 4,1բոխի, 0,4թխի, 0,3բոխի ցածրաբուն, 0,2հացենի, 0,1կաղնի ցածրաբուն: Միջին տարիքը 90 է, միջին լրիվությունը՝ 0,52, բռնիտետը՝ 4,3, 1հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը՝ 110մ³, իսկ 1 հա անտառածածկի միջին աճը՝ 1,28մ³:

Աղյուսակ 7 Տեղեկագիր արգելավայրի անտառգնահատման միջին ցուցանիշների՝ ըստ գերակշռող ծառատեսակների

№	Գերակշռող ծառատեսակը	Գնահատման միջին ցուցանիշներ					
		Տարիքը	Բոնիտետի դասը	Լրիվությունը	1 հա անտառածածկ մակերեսի միջին առավագանքը	Պաշարի 1 հա անտառածածկի միջին աճը	Ծառուտի միջին կազմը
1.	Սոճի	42	3,7	0,67	121	2,74	10.0U +Lg,Կ,Գ
2.	Կաղնի	102	4,4	0,51	111	1,11	6.2Կ 3.2Բ 0.5Թխ 0.1Lg +Թղ,Լ,ԽՃ,Ար,Գ,ՇՃ,Կոս,Սզ,ՈւոՃ
3.	Կաղնի ցածրաբուն	65	5,4	0,47	55	0,90	6.0Կg 3.3Բg 0.4Թխ 0.1Lg 0.1Բ 0.1ՈւոՃ
4.	Բոխի	69	3,8	0,57	122	1,75	7.1Բ 2.5Կ 0.3Թխ 0.1Lg +ՇՃ,Թղ,Կոս,Ար,Գ,ՇՃ,ԽՃ,Սզ,ՈւոՃ
5.	Բոխի ցածրաբուն	57	5,1	0,53	77	1,34	7.0Բg 1.6Կg 1.2Կ 0.2Թխ +Lg
6.	Հացենի	45	2	0,6	88	1,96	6.0Lg 3.0Բ 1.0Թխ +Կ
7.	Ուունի ծառ	39	5	0,33	33	0,88	5.6ՈւոՃ 2.4Բ 2.0Կ +Թխ,Lg

№	Գերակշռող ծառատեսակը	Գնահատման միջին ցուցանիշներ					
		Տարիքը	Բոնիֆանտի դասը	Երիվությունը	1 հա անտառածածկ միջին առավագությունը՝ մակերեսի 1 հա անտառածածկի մակերեսի 1 հա անտառածածկի միջին աճը	Պաշարի 1 հա անտառածածկի միջին աճը	Ծառուտի միջին կազմը
8.	Տանձենի	90	4	0,5	108	1,2	5.0ՏՃ 3.0Կ 1.0ԹՒ 1.0Բ +ՀՑ
9.	Ցաքի	19	5,6	0,54	16	0,82	10.0ՑԲ +ԱՑ
Ընդամենը		90	4,3	0,52	110	1,28	4.9Կ 4.1Բ 0.4ԹՒ 0.3Բց 0.2Հց 0.1Կց +ՏՃ, Ուոծ, Ս, ՑՑ, ԱՑ, Կոս, Գ, ԹԴ, Լ, ԽՃ, Ար, Շ, Հ

Աղյուսակ 8. Անտառածածկի մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների

№	Գերակշռող ծառատեսակը	2023	
		մակերեսը, հա	պաշար, խտմ ³
1	Սոճի	0,9	109
2	Կաղնի	1006,7	111839
3	Կաղնի ցածրաբուն	46,7	2566
4	Բուխի	362	44607
5	Բուխի ցածրաբուն	65,6	5043
6	Հացենի	5,8	510
7	Ուենի ծառ	2,4	80
8	Տանձենի	3,7	400
9	Ցաքի	3,7	58
Ընդամենը		1497,5	165212

Բոնիտետային դասը որոշվել է միջին տարիքով և միջին բարձրությամբ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ): Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ արգելավայրում անտառածածկի մակերեսի ընդհամենը 10,4%-ն է 2-3 բոնիտետային դասերի, 4-րդ բոնիտետային դասի ծառուտները կազմում են 700,6հա (46,8%), իսկ 5-5ա բոնիտետային դասերը միասին՝ 641,5հա (42,8%): Արգելավայրի ծառուտների միջին բոնիտսային դասը գնահատվել է 4,3:

Աղյուսակ 9 Անտառածածկի մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի

№	Գերակշռող ծառատեսակը	Բոնիտետային դասեր						Միջին բոնիտետ
		2	3	4	5	5ա	Ընդ, հա	
1	Սոճի		0,6		0,3		0,9	3,7
2	Կաղնի	4,8	55,2	458,2	479,3	9,2	1006,7	4,4
3	Կաղնի ցածրաբուն			1,7	25,5	19,5	46,7	5,4
4	Բուխի	14,9	74,1	237	36		362	3,8
5	Բուխի ցածրաբուն				58,8	6,8	65,6	5,1
6	Հացենի	5,8					5,8	2
7	Ուենի ծառ				2,4		2,4	5
8	Տանձենի			3,7			3,7	4
9	Ցաքի				1,5	2,2	3,7	5,6
Ընդհանուր		25,5	129,9	700,6	603,8	37,7	1497,5	4,3

**Բաժին 3. ԱՆՏԱՌՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

3.1 Ընդհանուր տեղեկություններ

Անտառտնտեսությանը որպես հարակից բնակավայրեր ընդունվել են անտառների 5կմ-ոց գոտում ընկած բնակավայրերը, որոնք ներառված են Գորիս խոշորացված համայնքի 13, Տաթև խոշորացված համայնքի 8 և Տեղ խոշորացված համայնքի 7 բնակավայրեր (աղյուսակ 10, Քարտեզ 16):

Աղյուսակ 10 Ընդհանուր տվյալներ բնակավայրերի վերաբերյալ

№	Բնակավայրի անվանումը	Հեռավորություն մարզի մայքսին կմ	Աղյուսակից գործիքից՝ կմ	Բնակչություն փոփոխությունը՝ դ նակարտությունը	Բնակչությունը՝ դ նակարտությունը	Հողագործության դրամականացումը՝ դ նակարտությունը	Հողային ֆոնդը՝ հա		յածողիկ գործություն
							Ընդհանուր	Որից գյուղատըն- տեսական	
Գորիս խոշորացված համայնք									
1	Գորիս քաղաք	67		1250-1520	20937	5039	4035	+/-	
2	Ակներ գյուղ	69	4	1700	1118	3952	3733	+/-	
3	Աղբուղաղ գյուղ			Նախկինում ընդգրկված է եղել Շուտնուխ գյուղի կազմում					
4	Շուտնուխ գյուղ	37	28	1450	154	2344	720	-	
5	Բարձրավան գյուղ	48	33	1520	112	2975	995	+/-	
6	Խնձորեսկ գյուղ	78	13	1580	2005	6991	6223	+/-	
7	Հարթաշեն գյուղ	79	14	1350	677	3167	2902	+/-	
8	Զորակ գյուղ			Նախկինում ընդգրկված է եղել Շուտնուխ գյուղի կազմում					
9	Ներքին Խնձորեսկ գյուղ	86	21	1540	249	624	577	+/-	
10	Որոտան գյուղ	50	15	1600	295	326	75	-	
11	Վանանդ գյուղ			Նախկինում ընդգրկված է եղել Շուտնուխ գյուղի կազմում					
12	Վերիշեն գյուղ	68	3	1600	2096	4762	4396	+/-	
13	Քարահոնջ գյուղ	61	4	1250	1376	1969	1735	+/-	
Տաթև խոշորացված համայնք									
1	Շինուհայր գյուղ	79	17	1480	2598	5245	5055	+/-	
2	Տաթև գյուղ	60	36	1610	1042	7637	5216	-	
3	Հայիձոր գյուղ	74	23	1250	602	2777	1456	-	
4	Հարժիս գյուղ	90	24	1700	831	5630	5337	-	
5	Սվարանց գյուղ	62	40	1700	283	1621	1563	-	
6	Խոտ գյուղ	83	12	1350	890	1795	1592	+/-	
7	Տանձատափ գյուղ	58	43	1400	103	809	294	-	
8	Քաշունի գյուղ	48	55	1500	15	858	808	-	
Տեղ խոշորացված համայնք									
1	Տեղ գյուղ	85	20	1360	2234	3867	3594	+/-	
2	Արավուս գյուղ	87	22	2390	168	443	410	+/-	
3	Խնաճախ գյուղ	96	31	1380	823	3237	3130	+/-	
4	Խողնավար գյուղ	112	45	1592	366	2121	1917	+/-	
5	Կոռնիձոր գյուղ	90	25	1125	1071	2417	2277	+/-	
6	Վաղատուր գյուղ	102	37	1550	400	2275	2057	+/-	
7	Քարաշեն գյուղ	81	16	1540	528	1370	1323	+/-	

Բնակավայրերը տարբեր հեռավորությունների վրա են գտնվում մարզկենտրոնից՝ 37-112կմ, մարզային քաղաքներից կամ Երևանից, որոնք էլ հանդիսանում են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնական շուկաները: Բնակավայրերը տարբերվում են նաև ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ՝ 1125-2390մ, ինչն իր հետքն է թողնում գյուղատնտեսության մասնագիտացման վրա: Համեմատաբար ցածրադիր շրջաններում ավելի զարգացած է մանր եղերավոր անասնապահությունն ու պտղաբուծությունը, վերին շրջաններում՝ խոշոր եղերավոր անասնապահությունն ու հողագործությունը: Սեփական բնակելի տներին կից այգիներում մշակում են խնձորենի, տանձենի, բալենի, ընկուզենի, հաղարշենի և այլ պտղատու ծառեր ու թփեր: «Հառավարության 26.06.2009թ ««Տաթև» գրոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» N848-Ն որոշմամբ «Տաթև» վանական համալիրը և հարակից՝ «Հյունիքի մարզի Խոտի, Շինուհայրի, Հալիձորի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի, Աղվանիի և Բարձրավանի գյուղական բնակավայրերը հայտարարվել է գրոսաշրջային կենտրոն: Նոյն որոշմամբ հաստատվել են «Տաթև» գրոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները և գերակա խնդիրները:

2010թ բացվել է աշխարհում ամենաերկար «Տաթևի թեսեր» ճոպանուղին, որի երկարությունը կազմում է 5,7կմ և ծգվում է Սյունիքի մարզի Հալիձոր գյուղից մինչ Տաթև վանական համալիրը:

3.2 Բնակչության սեռատարիքային բաշխվածքը

Անտառունտեսությանը հարակից բնակավայրերի մշտական բնակչության ընդհանուր թիվը 40973 մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 20937 մարդ, իսկ գյուղականը 20036 մարդ:

Բնակավայրերի բնակչության որոշակի մասը ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողներ են: Բացակայողների մեծ մասը տղամարդիկ են, որոնց գերակշռող մասը ավելի շատ հակված կլինի վերաբանալ իրենց համայնքներ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում:

3.3 Աշխատանքային միգրացիա

Երիտասարդ ընտանիքների շրջանում նկատվում է իրենց գյուղական բնակավայրերը լքելու միտում՝ պայմանավորված ավելի լավ ապրելակերպի ապահովման ձգտումով: Վերջին տարիներին աճել է նաև աշխատանքային միգրացիայի ցուցանիշը, ինչն անհանգստացնող է, և պայմանավորված է 44-օրյա պատերազմի հետևանքով, մշտական եկամուտների թուլացմամբ՝ վառելիքի, պարարտանյութերի թանկացմամբ, ընդհանուր տնտեսական ակտիվացման թուլացմամբ, վատ ապրելակերպով և այլն: Ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողները հիմնականում տղամարդիկ են, որոնց գերակշռող մասը ավելի շատ

հակված կլինի վերադառնալ իրենց համայնքներ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում:

Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության և վստահության բարձրացման, կրթական և վերապատրաստման, լրացուցիչ շահագրգովածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

3.4 Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը

Հետազոտված բնակավայրերի մեծ մասում գործում են մանկապարտեզներ և նախակրթարաններ: Հետազոտված բնակավայրերում գործում են տարրական, հիմնական, ավագ կամ միջնակարգ դպրոցներ: Իրավիճակը դպրոցների մեծամասնությունում գոհացուցիչ չէ: Վերանորոգման կարիք ունեն ոչ քիչ դպրոցներ, նաև կահույքի, սպորտային և ուսուցողական նյութերի: Սպորտային ակումբներ և ենթակառուցվածքներ գյուղական բնակավայրերում դրեթե չկան՝ բացառությամբ դպրոցների մի մասի սպորտային դահլիճների: Համեմատաբար լավ է պատկերը քաղաքային բնակավայրում:

Առողջապահական ենթակառուցվածքների վիճակը բնակավայրերում վատ չէ. բնակավայրերում առկա են բուժկետեր և ամբուլատորիաներ, որտեղ վերապատրաստված բուժաշխատողները առաջին օգնության ծառայություններ են մատուցում բնակչությանը: Բարձրակարգ ու կլինիկական բժշկական ծառայություններն հասանելի են միայն քաղաքներում:

Գյուղական բնակավայրերի մշակութային կյանքը բարելավման լուրջ կարիք ունի: Մշակույթի և կամ կենցաղի տների շենքային պայմանները գրեթե ամենուր վատ վիճակում են, մշակութային իրադարձությունները եզակի են: Համեմատաբար այլ է վիճակը տուրիստական կենտրոններում, որտեղ մյուս բնակավայրերի համեմատ դիտվում է մշակութային աշխուժություն:

3.5 Այլ ենթակառուցվածքներ

Հետազոտված բոլոր բնակավայրերն ամբողջությամբ էլեկտրիֆիկացված են: Հետազոտված բոլոր բնակավայրերը այս կամ այն չափով ապահովված են խմելու ջրի կանոնավոր մատակարարմամբ. որոշ տեղերում առկա են ջրամատակարարման խնդիրներ: Զրի որակն ընդհանուր առմամբ բավարար է: Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերից գազաֆիկացված են 18-ը: Հետազոտված բնակավայրերի մեծ մասում թեև ոչ բավարար հաճախ, իրականացվում է աղբահեռացում: Միաժամանակ մտահոգիչ է աղբավայրերի առկայության և որպես աղբավայր օգտագործվող տարածքների վիճակը:

3.6 Գյուղատնտեսություն

Անտառտնտեսության հարակից համայքներում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն: Բնակավայրերի մեծամասնությունում բանջար-բռստանային կուլտուրաների արտադրությունը հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը և հիմնականում աճեցվում են ոռոգվող տնամերձ հողամասերում:

Համայնքներն ունեն անասնապահության զարգացման պոտենցիալ, որն առաջին հերթին պայմանավորված է բնակավայրերի մեծ մասում արոտավայրերի սգախ տարածքների առկայությամբ: Սակայն ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, իմշափիսին են կենդանական ծագման արտադրանքի իրացման ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասի ոչ ջրարբիացված լինելը, բնակավայրերի մոտակա արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները, որոշ արոտավայրեր սահմանամերձ լինելու հանգամանքը և այլն: Համայնքներում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների մեծ մասը պայմանավորված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների վատ վիճակով, դրանց մեծ մասը մնացել են դեռևս խորհրդային ժամանակներից: Դրանք ֆիզիկապես և բարոյապես մաշված են և չեն կարող նպաստավոր լինել արդյունավետ գյուղատնտեսության վարման տեսանկյունից: Գյուղատնտեսական մեքենասարարավորումները բնակավայրերում հիմնականում նորացման, արդիականացման կարիք ունեն:

3.7 Անտառտնտեսության հարակից տարածքներում սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացում

Հետազոտությունների իրականացման նպատակն էր գնահատել անտառային պաշարների ազդեցությունը և եկամուտների ստացման հնարավորությունները) և նշանակությունը տեղական կարիքների բավարարման տեսանկյունից:

Հետազոտությունները իրականացվել են 2010թ. «Անտառային օրենսդրության կիրարկման բարելավում եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան երկրներում և Ռուսաստանում» տարածաշրջանային ծրագրի (ENPI-FLEG) շրջանակում մշակված հարցաշարով՝ կատարված որոշակի փոփոխություններով:

Հարցումներն իրականացվել են ծրարված հարցաթերթիկները տնային տնտեսություններում բաժանելու, ինչպես նաև պատահական վայրերում հանդիպած մարդկանց հետ հարցաթերթիկը տեղում լրացնելու ճանապարհով: Հարցումներն իրականացվել են Գորիս քաղաքում(բազմաբնակարան շենքերում և մասնավոր տներում), ինչպես նաև 12 գյուղական բնակավայրերում: Սույն հաշվետվությունում

Ներկայացվում է հարցաշարի հիմնական կետերի հարցման արդյունքների վերլուծությունը (Տե՛ս հավելված 2):

3.8 Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում

Անտառտնտեսությանը հարակից Գորիս քաղաքը և 27 բնակավայրերը տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների 5կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով քաղաքի բնակչության թիվը մոտ 20937, գյուղական բնակավայրերում 20036: Բնակավայրերից 8-ը դեռևս գազաֆիկացված չեն կամ գտնվում են շինարարական փուլում: Ձեռուցման փայտի նվազագույն պահանջարկը ընդհանուր հաշվով կազմում է մոտ 35000մ³: Նախատեսվող հատումներից հնարավոր է բավարարել տարեկան ընդհամենը 900խտմ³:

Դաշտային գոյքագրման ընթացքում հաշվարկվել է նաև անտառտնտեսության անտառներում առկա բնական թափուկ բնափայտի պաշարը, (շուրջ 30000 մ³) ընդ որում թափուկ բնափայտի քանակական և որակական գնահատման նկարագիրը հեկայալն է.

- 19500մ³ (65%) - 5 և ավել տարիների վաղեմությամբ, բնակավայրերից ու ճանապարհներից մեծ հեռավորությունների վրա և հիմնականում դժվարամատչելի տեղանքներում, մեծ մասը գտնվում են քայլայման փուլում, հիմնականում կորցրել են անհրաժեշտ որակական հատկանիշները, արտահանման համար էլ կպահանջվի տեխնիկական և նյութական մեծ ներդրումներ:

- 10500մ³ (35%) - տեխնիկական հատկությունները դեռևս պահպանած բնափայտն է, ցրված անտառտնտեսության ողջ տարածքում, 1հեկտարում միջին 3-5մ³, իրացման տեսանկյունից համեմատաբար մատչելի տեղանքներում, հիմնականում մանր և միջին (4-25 սմ տրամագիծ) բնափայտի տեսքով, որից և օգտվում է ազգաբնակչությունը:

Յուրաքանչյուր տարում անտառտնտեսության անտառներում առաջացած բնական թափուկը կազմում է մոտ 4000մ³ (ընթացիկ աճի մոտ 30%-ը կամ անտառածածկի 1հա-ի հաշվով մոտ 0,4մ³), որից համայնքների մոտակա տարածքների բնափայտը գրեթե ամբողջությամբ իրացվում է ազգաբնակչության կողմից Ձեռուցման նպատակներով, իսկ հեռավոր տարածքների և դժվարամատչելի տարածքների թափուկ բնափայտի մեծ մասը չի իրացվում:

Բաժին 4. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Անտառային էկոհամակարգերի զարգացման բնականոն հաշվեկշիռն ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով անտառկազմող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկությունները, ներկա անտառչինությունը իրականացվել է հիմք ընդունելով հատման հասակների հետևյալ դասակարգում՝ ըստ 2005թ. ընդունված անտառային օրենսգրքի (Այլուսակ 11):

Այլուսակ 11 Անտառի ըստ նպատակային նշանակության և ըստ գերակշռող ծառատեսակների հատման տարիքները

Ծառատեսակի անվանումը	Հասակային դասի տևողությունը	Անտառի կատեգորիան ըստ նշանակության		
		Արտադրական	Պաշտպանական	Հատուկ
1. Սոճի	20	121	141	161
2. Կաղնի սերմնային	20	161	181	201
3. Հացենի, թեղի, թխկի	20	121	141	161
4. Ընկուզենի հունական	20	141	161	181
5. Կաղնի շիվային	10	61	71	81
6. Բոխի սերմնային	20	81	101	121
7. Լորենի	10	91	101	111
8. Կեչի	10	61	71	81
9. Կաղամախի, ուտենի, բարդի	10	41	51	71
10. Բոխի շիվային և այլ ցածրարուն տեսակներ	10	61	71	81
11. Ղաժի	10	41	51	61
12. Տանձենի, Խնձորենի	20	101	121	141

4.1 Անտառշահագործման և փայտամշակման բնութագիրը

Անտառունտեսությունում հատուկ անտառպատրաստման արտադրություն և անտառհումքային բազաներ չկան:

Բնակայտի պատրաստումը կատարվում է՝

- հատման նշանակված կանգուն ծառերի հատում բենզասղոցով,
- շինակայտի, վերամշակման ենթակա փայտի և վառելակայտի առանձնացում և կուտակում անտառում,
- անտառից տեղափոխում մեքենայի բարձման հարթակ տրակտորով կամ հատուկ տեխնիկայով,
- բարձումը և բեռնաթափումը կատարվում է ձեռքով:

Անտառունտեսությունում անտառանյութի մթերումը կատարվում է պայմանագրային և ինքնապատրաստման եղանակով՝ գնորդների կողմից:

4.2 Բնափայտային անտառօգտագործում

Անտառունտեսությունում բնակայտը մթերվում է անտառի խնամքի և սանիտարական հատումներից, մասամբ նաև այլ հատումներից:

Անտառպետություն											Իրացվող			
Քառակյանու Նº	Հարթակի Նº	Սահման, հա	Լանջի կողմանադրություն, թերություն,	ՏՄԲ	Չառտի վարչություն	Բոնիտետը	Լիդուր	Տարին	Հարվածի պաշտոնը*	Հատման և նախատեսվող հարաբեկությունը	Ընդամենը	Շինափայտ	Կառելախյութ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	12	13	14	15	16
18 24 24 25 28	29 2 40 15 8	1,7 10,2 7,7 6,4 4,2	ՀՎ-ալ5 Հս-20 Ա-30 Ալ15 Ալ-25	1790 1780 1540 1690 1630	8բ2կ+թխ 8բ2կ+թխ 8բ2կ+թխ,hց 7բ3կ+հց+թխ 7բ3կ+հց+թխ	4 3 4 3 4	0,6 0,6 0,7 0,7 0,6	90 90 90 90 90	269 2040 1378 1491 731	30 200 138 150 80	25 185 117 128 70	2 18 12 13 7	23 167 105 115 63	
	Ընդմենք		73,9						14331	1442	1238	122	1116	

4.2.2 Խնամքի հատումներ

Համաձայն անտառկառավարման պլանների մշակման իրահանգի՝ խնամքի հատումները նշանակվում են այն բոլոր ծառուտների համար, որոնք անտառագիտական հասկացողությամբ խնամք են պահանջում:

2007թ. կառավարման պլանով նախատեսված է եղել իրականացնել խնամքի հատումներ, ընդհանուր՝ 917 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 18870խտմ³, նույն թվում լուսավորման և մաքրման հատում 17,3 հեկտարի վրա, նոսրացման հատումներ՝ 86,7 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 1507խտմ³ և անցումային հատումներ՝ 817,3 հեկտարի վրա, հատման նախատեսած ընդհանուր պաշարը 17312խտմ³:

«Անտառային կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համաձայն, 2008-2022 թվականների ընթացքում անտառնտեսության ամբողջ տարածքում բոլոր տեսակի հատումներ իրականացվել են ընդհանուր 2072 հեկտարի վրա, 44272խտմ³ ընդհանուր պաշարով: Նոյն թվում նոսրացման հատումներ 1852խտմ³, անցումային հատումներ 20820խտմ³:

2024-33 թվականների համար նախնական ուսումնասիրության արդյունքներով խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 347,2հա անտառային հատվածներում, որոնցում ընդհանուր պաշարը 52771խտմ³, հատումների համար նախատեսած ընդհանուր պաշարը 8847խտմ³, իրացման ենթակա պաշարը՝ 7331խտմ³, որից շինափայտի պաշարը՝ 2224խտմ³, վառելափայտը՝ 5107խտմ³:

Լուսավորման և մաքրման հատումներ նախատեսվել են ընդամենը 9,0 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը 8826խտմ³, հատման նախատեսած պաշարը 197խտմ³, շինափայտը նախատեսվել է սոճուտներում՝ 43մ³:

Նոսրացման հատումներ նախատեսվել են ընդհանուր 101,8 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը 9846խտմ³, հատման նախատեսած պաշարը 1444խտմ³: Հատման ծավալում հիմնականում բոխի, կաղնի, սոճի տեսակներ են, շինափայտի պաշարը՝ 120մ³:

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 236,4 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը 42043խտմ³, հատման նախատեսած պաշարը

Անտառակետություն	Քառակուսու Նք	Հատվածի Նք	Մակերեսը, հա	Լամշի կողմնադրություն, թերություն.	ԾՄԲ	Ծառատարածություն կամ կամաց լիանի կամ ամենամեծ լիանի հատվածի պաշտոնական անունը	Բոնիտետը	Լիկությունը	Տարիքը	Հատվածի պաշտոն, * իմլ մ ³	Հատման համար այլառողկանական անունը	Ծննդեմնական համար	Ծննդեմնը	Իրացվող	Շինարարություն	Վարկային	
1	2	3	4	5	6	7	8	9	10	12	13	14	15	16			
	28	16	3,1	Ալ-20	1600	5կ5բ+հց,թխ	4	0,7	110	589	60	51	7	44			
	28	29	2,1	ՀՎ-ամ20	1490	7կ2բ1թխ	2	0,7	45	328	33	28	3	25			
	29	3	5,8	ՀՎ-ալ25	1580	5կ5բ+հց,թխ	4	0,7	110	1189	120	102	10	92			
	30	3	1,5	Ալ-25	1700	5կ4բ1հց+թխ	4	0,7	110	224	22	18	3	15			
	42	8	3,7	Ամ-20	1550	4կ6բ+թխ	4	0,7	90	551	55	48	7	41			
	Ընդամենը		128,2							21962	2741	2316	248	2068			
	Անտառապետությ		187,5							28381	3579	2991	311	2680			
	լուսա- մաքրման		9,0							882	197	153	43	110			
	նոսրացման		101,8							9846	1444	1163	120	1043			
	անցումային		236,4							42043	7206	6015	2061	3954			
	Անտառառտնտեսությունում		347,2							52771	8847	7330	2224	5107			

4.2.3 Անտառապաշտպանական միջոցառումներ

ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը սահմանում են անտառապաշտպանական միջոցառումների իրավական ասպեկտները և իրականացման կարգը, համաձայն որոնց անտառապաշտպանական միջոցառումները ներառում է անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ, անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելում և սանիտարական հատումների:

Սանիտարական հատումների անհրաժեշտությունը և ծավալները հիմնավորվում են անտառապաթոլոգիական ուսումնասիրությունների կամ մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա (ՀՀ անտառային օրենսգիրք, հոդված 25), ընդ որում անտառապաթոլոգիական ուսումնասիրությունները պլանավորվում և ֆինանսավորվում են անտառշինական ծրագրից առանձին, **ինչը Սյունիքի անտառառտեսությունում** չի հրականացվել:

Համաձայն անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգի (ՀՀ գյուղատնտեսության նախարարի 10.08.2005թ. N 130-Ն իրաման) գլուխ 8, կետ 2-ի, անտառի գույքագրման ժամանակ գնահատման քարտում նշվում է նաև վնասատուներով և հիվանդություններով ծառութների կամ առանձին ծառերի վարակվածության աստիճանը, վնասված ծառերի պաշտոնը և տնտեսական միջոցառումները:

Հիմք ընդունելով նշվածը, գույքագրման ժամանակ առանձին հատվածներում հաշվարկել է՝ հիվանդ, չորացող և չորացած ծառերի ծավալները և սանիտարական հատումների անհրաժեշտությունը, ընդ որում սանիտարական հատումները

Անտառապետություն	Քառակրուտում №	Հատվածի №	Մակերեսը, հա	Լանջի կողմադրություն, ° թերություն, °	ԾՄԲ	Ծառոտի կազմ	Բոնիբետը	Լրիվությունը	Տարիքը	Հատվածի պաշար, * խտ մ³	Հատման համար նախատեսված պաշարը, խտ մ³	Ընդամենը	Ծիճակայտ	Հարցվող		
1	2	3	4	5	6	7	8	9	10	12	13	14	15	16		
12	4	6,9	Հս-25	1380	8p2կ+թխ	4	0,6	110	1290	200	170	17	153			
12	9	4,1	Հս-ամ20	1410	7p2կ1թխ+hg	4	0,6	90	656	80	70	7	63			
12	16	2,4	Հս-ամ30	1490	8p2կ+թխ,hg	4	0,5	90	334	50	43	4	39			
13	12	3,3	Հս-ամ15	1680	4կ6բ+թխ,hg	4	0,5	9	432	60	51	5	46			
13	22	2,0	Ա20	1740	7p3կ+թխ,hg	4	0,6	110	348	40	34	3	31			
15	29	11,8	Հս-ամ30	1680	7p3կ+թխ,hg	4	0,5	110	2053	220	187	18	169			
15	30	3,2	Հս-30	1810	7p2կ1թխ+hg	4	0,5	110	522	60	51	5	46			
17	10	3,3	Հս-ամ25	1580	8p2կ+թխ,hg	4	0,6	90	574	60	51	5	46			
17	37	0,9	Ա-25	1810	7p2կ1թխ+hg	4	0,5	90	131	20	17	1	16			
17	38	10,2	Հս-ալ20	1740	6p2կ1թխ1hg	3	0,6	90	1775	200	170	17	153			
18	15	3,9	Ա-15	1810	8p2կ	4	0,5	110	550	80	70	7	63			
24	15	24,8	Ա-30	1730	7p3կ+թխ,hg	4	0,6	110	4836	500	420	42	378			
24	25	3,7	Ա-25	1675	8p2կ+թխ,hg	4	0,5	90	492	60	51	5	46			
24	38	2,2	Ա-30	1650	7p3կ+թխ,hg	4	0,6	90	367	40	36	3	33			
25	16	3,6	Հս-ալ25	1650	6p3կ1թխ+hg	3	0,6	90	720	80	70	7	63			
26	39	1,1	Ա-30	1650	7p3կ+թխ,hg	4	0,6	90	199	25	20	2	18			
27	5	2,4	Ա-10	1670	7p3կ+թխ,hg	4	0,6	110	408	40	36	3	33			
42	22	8,4	ՀՎ-ամ-30	1510	6p3կ1թխ+hg	4	0,6	90	1403	160	130	13	117			
Ընդամենը	169,3									28151	3305	2811	283	2528		
Ամբողջը	171,8									28495	3400	2888	306	2582		

4.2.4 Նախագծված անտառօգտագործման ծավալներն ըստ հատման տեսակների

Սյունիքի անտառութեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 593,9հա-ի վրա կազմում է 13689խտմ³, այդ թվում իրացման ենթակա անտառանյութի պաշարը 11457մ³ է, որից շինափայտը՝ 2652մ³:

Ըստ հատման տեսակների՝ անտառվերականգնման հատումները կազմում են հատման նախատեսած պաշարի 15,3%-ը խնամքի հատումները կազմում են հատման նախատեսած պաշարի 48,6%-ը, իսկ սանիտարական հատումները 36,1%-ը:

Ընդհանուր անտառօգտագործման մակերեսների 27,5%-ը և հատման ենթակա պաշարների 39,2%-ը նախատեսվում է Գորիսի անտառապետությունում, համապատասխանաբար 72,5% և 60,8%-ը Շուշնուխի անտառապետությունում (Այլուսակ 15):

Այուսակ 15. Ամփոփագիր անտառօգտագործման նախատեսած ծավալների ըստ հատման տեսակների 2024-2033թթ.

Անտառապետություն	Հատման տեսակը	Հատման նախատեսվող մակերեսը, հա			Հատվածներում ընդհանուր պաշարները ³	Հատման նախատեսվող պաշարները ³	Իրացման հնարակա անտառանութի պաշարները ³	Որից	
		Գորիսի	Շուռնուխի	Ամբողջը				Տիտղոս	Վարկայի
Գորիսի	Մաքրման	9,0	882	197	153	43	110		
	Նորացման	42,5	3427	606	488	57	431		
	Անցումային	108,2	20081	4465	3699	1813	1886		
	Սանիտարական	3,5	344	95	77	23	54		
	Ընդամենը	163,2	24734	5363	4417	1936	2481		
Շուռնուխի	Անտառվերականգնման	73,9	14331	1442	1238	122	1116		
	Նորացման	59,3	6419	838	675	63	612		
	Անցումային	128,2	21692	2741	2316	248	2068		
	Սանիտարական	169,3	28151	3305	2811	283	2528		
	Ընդամենը	430,7	70593	8326	7040	716	6324		
Ամբողջը	Անտառվերականգնման	73,9	14331	1442	1238	122	1116		
	Մաքրում	9,0	882	197	153	43	110		
	Նորացման	101,8	9846	1444	1163	120	1043		
	Անցումային	236,4	41773	7206	6015	2061	3954		
	Սանիտարական	172,8	28495	3400	2888	306	2582		
	Ընդամենը	593,9	95327	13689	11457	2652	8805		

4.3 Ոչ բնափայտային անտառօգտագործում

Ուսումնասիրությունների արդյունքում 3228,5 հեկտարի վրա պտուղ-հատապտուղների հաշվարկային մոտավոր բերքը գնահատվել է մոտ 123550կգ., որում 48%-ը գումարային կազմում է մասուրը և սիզը:

Հաշվարկային տնտեսական բերքի ընդհանուր քանակությունը թեև թիս չէ, բայց անտառտնտեսության կողմից մեծ ծավալներով իրացումը իրատեսական չէ այն հիմնավորմամբ, որ անտառամերձ համայնքների բնակչիները օգտվում են ՀՀ անտառային օրենսգրքի 44-րդ հոդվածի առաջին մասով ընձեռնած իրավունքից՝ ազատորեն առանց որևէ թույլտվության գտնվելու անտառներում հանգստի և անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղ-հատապտուղներ հավաքելու համար, սակայն իրականում հավաքում են անձնական կարիքներից շատ ավելի, իսկ հաշվառումը գործնականում հնարավոր չէ իրականացնել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանիքի անդամները կարող են հավաքը իրականացնել տարբեր անտառամասերում:

Անտառտնտեսության տարածքներում թիս չեն նաև ուտելի խոտաբույսերը՝ ընդհանուր 2800 հեկտարի վրա գնահատվել է մոտ 7805կգ (Այուսակ 16;17, Քարտեզ 18;19):

Աղյուսակ 16. Անտառտնտեսությունում պտուղ-հատապտուղների մակերեսների և պաշարի (հաշվարկային տնտեսական բերք) բաշխվածությունը

№	Պտուղ-հատապտուղներ	Անտառպետություն					
		Գորիսի		Շուռնուխի		Անտառտնտեսություն	
		հա	կգ	հա	կգ	հա	կգ
1	Տանձենի	227	12400	286	12600	515	25000
2	Խնձորենի	39,5	4100	41,5	5800	81	9900
3	Ընկուզենի հոնական (կանաչ)	63,5	7150			63,5	7150
4	Մասրենի	595	16800	810	17700	1405	34500
5	Սղնենի	362	10400	395	13900	757	24300
6	Մոշենի	214	12500	195	10200	405	22700
Ամբողջը		1501	63350	1727,5	60200	3228,5	123550

Աղյուսակ 17 Սյունիքի անտառտնտեսության տարածքների ուժելի խոտաբույսերի

№	Ուտելի խոտաբույսերի անվանումը	Անտառպետություններ					
		Գորիսի		Շուռնուխի		Ընդամենը	
		հա	կգ	հա	կգ	հա	կգ
1	Ավելուկ	55	150	58	180	113	330
2	Բոլիսի	85	250	58	200	143	450
3	Ծնեբեկ	86	160	52	135	138	295
4	Սնդրիկ	82	260	250	295	332	555
4	Իծկոտ	72	670	66	510	138	1180
5	Շուշան	210	490	285	620	495	1110
6	Սիրեխ	165	520	226	670	391	1190
7	ՈՒԼՈ չոր	155	225	185	285	340	510
8	Դաղձ չոր	105	110	115	125	230	235
9	Եղինջ	230	900	260	1050	490	1950
Ընդամենը		1245	3735	1555	4070	2800	7805

Բաժին 5. ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Էկոհամակարգային ծառայությունները օգուտներ են, որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից՝ բարիքների և ծառայությունների տեսքով:

Ըստ TEEB-ի (Էկոհամակարգերի և կենսաբազմազանության էկոնոմիկա, <http://www.teebweb.org/>) մեթոդաբանության՝ անտառների էկոհամակարգային ծառայությունները դասակարգվում են հետևյալ 4 կատեգորիաների (դասերի):

- 1) օգտակար արտադրանքի տրամադրման (ուսուրային, ապահովող/մատակարարման) ծառայություններ, էկոհամակարգային ծառայություններ, որոնք բնութագրում են էկոհամակարգերի կենսագործունեության նյութական և էներգետիկ արդյունքները (արգասիքները),
- 2) կարգավորող ծառայություններ, էկոհամակարգային ծառայություններ, երբ էկոհամակարգերը գործում են որպես կարգավորիչներ,
- 3) մշակութային (հոգևոր) ծառայություններ, ներառում է ոչ նյութական գեղագիտական, հոգևոր և ֆիզիոլոգիական բարիքները (օգուտները), որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից կամ էկոհամակարգերի հետ շփման արդյունքում,
- 4) նպաստող ծառայություններ - ծառայություններ, որոնք անհրաժեշտ են էկոհամակարգային մյուս ծառայությունների գործարկման (ապահովման, տրամադրման, մատուցման) համար:

Սյունիքի անտառունտեսության համար կատարվել է կարգավորող ծառայություններից ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում, մատակարարող ծառայություններից սննդի տրամադրման ծառայության գնահատում, մշակութային (հոգևոր) ծառայություններից էկոտուրիզմի ծառայության գնահատում:

5.1 Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում

Ածխաթթու գազի կլանման (կլիմայի փոփոխության մեղմացման) ծառայությունը հանդիսանում է անտառի կարևորագույն կարգավորող ծառայություններից մեկը:

Անտառային էկոհամակարգերում ածխածնի պարունակության հաշվարկի ժամանակ օգտագործված են հետևյալ կատեգորիաները և բնորոշումները.

- Վերգետնյա կենսազանգված - հողի մակերեսին գտնվող կենսազանգվածն է: Այն ներառում է բունը, կոճղը, ճյուղերը, կեղևը, սերմերն ու տերևները
- Ստորգետնյա կենսազանգված - հողի մակերեսից ներքև գտնվող կենդանի արմատների ամբողջ կենսազանգվածն է: Չեն հաշվում 2մմ-ից պակաս տրամագծով արմատները, քանի որ դրանք հնարավոր չեն փորձնական եղանակով տարբերել հողի օրգանական նյութից կամ անտառային թափվածքից
- Զորացած և տապալված բնափայտի կենսազանգված - ամբողջ անկենդան բնափայտային կենսազանգվածն է առանց անտառային թափուկի, կամ այն հաշվում է որպես չորացած կամ տապալված թափուկ, որը հողի վրա է կամ ծածկված է հողի շերտով: Զորացած կամ տապալված բնափայտը ներառում է հողի մակերեսին գտնվող բնափայտը, մեռած արմատները և 10սմ և ավելի տրամագծով կոճղերը.

- Անտառային թափուկ - 10սմ-ից պակաս տրամագծով բնափայտի անկենդան կենսազանգվածում, որը գտնվում է քայլայման տարրեր փուլերում, հանքային կամ օրգանական հողի մակարդակում: Այս կատեգորիայի մեջ են մտնում անտառային թափուկը, հումուսային և գոլորշառաջացնող շերտերը:

Կենսազանգվածի պաշարը և ածխածնի կուտակումը գնահատվել է կիմայի փոփոխության խնդիրներով զբաղվող միջազգային խմբի կողմից մշակված ձեռնարկում առաջարկված մեթոդոլոգիական ցուցումների համաձայն (www.fao.org/forestry): Բների, վերգետնյա և ստորգետյա կենսազանգվածի հաշվարկման համար օգտագործվել են կենսազանգվածի հաստատուն նշանակությունները և արմատ/ընձյուղ հարաբերակցությունը:

Այս մեթոդաբանությամբ հաշվարկել ենք Սյունիքի անտառտնտեսության անտառներում կուտակված ածխածնի քանակը, որը ներկայացվում է ստորև բերված այլուսակներում (Այլուսակ 18-22):

Այլուսակ 18. Սյունիքի անտառտնտեսության՝ ըստ գերակշռող ծառատեսակների կենսազանգվածը (2023թ.)

Տեսակը	Տառատի պաշարը (հազ.մ ³)	Բազիսային խոտթյունը (տ/մ ²)	Բների կենսազանգվածը (հազ. տ)	Կենսազանգվածի աճման գործակիցը	Կենսազանգվածը (հազ. տ)	Արմատ/ընձյուղ հարաբերակություն	Կենսազանգվածը (հազ. տ)
Սոճի	30,89	0,538	16,62	1,4	807,13	0,23	185,64
Կաղնի	639,70	0,57	364,63				
Բոխի	297,86	0,64	190,63				
Թեղի	1,16	0,415	0,48				
Հացենի	0,97	0,648	0,63				
Թիսկի	0,94	0,63	0,59				
Այլ տեսակներ	6,53	0,45	2,94				
Ընդամենը 2023թ.	978,05		576,52				
Զորացած և տապալված բնափայտի կենսազանգված	10	0,49					4,9

Այլուսակ 19 Կենդանի և անկենդան կենսազանգվածում կուտակված ածխածնի հաշվարկը

Կատեգորիա	Կենսազանգվածի պաշարը հազ. տոննա	ԲԷՊ ԿՓՄԽ գործակիցը	Ածխածնի պարունակությունը հազ. տոննա
Վերգետնյա կենսազանգված	807,13	0,48	387,42
Ստորգետնյա կենսազանգվածում	185,13	0,47	87,01
Զորացած և տապալված բնափայտի կենսազանգված	4,9	0,46	2,25

Այլուսակ 20 Հողում (30սմ) ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա)

Հողի տիպը	Մակերեսը, հա	Ածխածնի կուտակումը՝ տոննա 1հա-ի վրա	Ածխածնի կուտակումը հազ. տոննա
Հումուսի կուտակման բարձր հզորության (ԲԱՐՄ) հողերում	9700	38	368,60

Այլուսակ 21 Անտառային թափվածքում ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա)

Անտառի մակերեսը, հազ. հա	Ածխածնի պարունակությունը անտառային թափվածքում՝ տոննա 1հա-ի վրա (թափվածքի հաստությունը 10սմ)	Ածխածնի կուտակումը, հազ. տոննա
9700	28,2	273,54

Այլուսակ 22 Անտառներում կուտակված ածխածինը (2023թ)

Կատեգորիա	Ածխածնի պարունակությունը (հազ. տոննա)
Վերգետնյա կենսագանգվածում ածխածնի պարունակությունը	387,42
Ստորգետնյա կենսագանգվածում ածխածնի պարունակությունը	87,01
Ընդամենը կենդանի կենսագանգվածում	474,43
Չորացած և տապալված բնափայտում ածխածնի պարունակությունը	2,25
Թափվածքում ածխածնի պարունակությունը	273,54
Ընդամենը անկենդան կենսագանգվածում	275,79
Հողում (30սմ խորության վրա) ածխածնի պարունակությունը	368,60
Ընդամենը ածխածնի կուտակում	1118,82

Անտառունտեսության 9700 հեկտար անտառածածկ տարածքում ածխածնի կուտակումը կազմում է մոտ 1118,82 հազար տոննա, կամ 1 հեկտարի հաշվով մոտ 115,3 տոննա:

Ածխածնի կուտակումը պայմանավորված է կենդանի կենսագանգվածի աճով, իսկ կորուստը պայմանավորված է անտառանյութի հատումներով, իրդեհներով, վնասատուների և հիվանդությունների հետևանքով կենսագանգվածի կորուստներով, ինչից և ստորգետնյա կենդանի կենսագանգվածը վեր է ածվում անկենդան կենսագանգվածի:

Ածխաթթու գազի կլանումը հաշվարկելու նպատակով որոշվում է հիմնական անտառկազմող և ուղեկցող ծառատեսակների միջին տարեկան աճը (M^3), այնուհետև, հիմք ընդունելով անտառագիտական ուսումնասիրություններից նշված ծառատեսակների բնափայտի բազիսային խտության գործակիցները, զանգվածը (կենդանի կենսագանգվածը) վերածվում է չոր նյութի (P_0): Տարբեր ծառատեսակների համար ստացված գործակիցները (բնափայտի բազիսային խտությունը) միջին կշռային մեթոդով վեր է ածվում միջին գործակիցի, որոշվում է ածխածնի քանակը չոր նյութում ըստ տարբեր ծառատեսակների, որից հետո միջին կշռային մեթոդով դուրս է բերվում միջինը:

Այունիքի անտառատնտեսության անտառներում տարեկան միջին աճը կազմում է մոտ 12800,7խտմ³:

Աղյուսակ 23 Տարեկան միջին աճը և ածխածնի կլանումը ըստ ծառատեսակների

Տեսակը	Տարեկան միջին աճը (մ ³)	Բազիսային խտությունը (տ/մ ³)	Կենսագան գվածը	ԿՓՓՄԽ (IPCC) գործակիցը	Ածխածնի կուտակում, տոննա	CO ₂ (տ)
Սոճի	684,83	0,538	368,44	0,48	C(տ)*44/12	3711,72
Կաղնի	6734,55	0,57	3838,70			
Բոխի	4167,04	0,64	2666,90			
Հացենի	27,60	0,63	17,39			
Շեղի	26,73	0,415	11,09			
Այլ տեսակներ	1844,78	0,45	830,25			
Ընդամենը	12800,70		7732,77			13609,64

Արդյունքում ստացվում է տարեկան 3711,72 տոննա ածխածնի կուտակում և 13609,64 տոննա ածխաթթու գազի կլանում:

Անտառկառավարման պլանով նախատեսված են նաև անտառվերականգնման միջոցառումներ՝ 307,2 հա անտառի վերականգնում: Հաշվի առնելով նախատեսվող վերականգնման միջոցառումների բնույթը վերականգնման համար առանձնացված տարածքներում, վերգետնյա կենսագանգվածի տարեկան աճը կկազմի մոտավորապես 1,32 տ/հեկտար կամ 0,634 տ/հա ածխածնի: Համապատասխան ընծյուղ/արմատ հարաբերակցությունը 0,23 է: Ըստ այդմ, ածխածնի սեկվեստրացիայի աճը ամեն հեկտարի հաշվով կլինի 0,634+0,634x0,23=0,781 տոննա/հեկտար կամ 2,86տ/հա ածխածնի երկօքսիդի համարժեք, եթե փոխակերպենք սա ածխածնի երկօքսիդի (0,781x44/12):

Այսպիսով, համաձայն հաշվարկների, ածխածնի կլանման (սեկվեստրացիայի) առավելությունը կկազմի՝ 0,781x307,2=239,92 մետրական տոննա ածխածնի կամ 2,86x307,2=878,59 մետրական տոննա ածխածնի երկօքսիդ:

5.2 Սննդի տրամադրման ծառայության գնահատում

Ազգարնակչությունը հավաքում է հիմնակնում ընկոյզ, տանձ, մոշ, մասուր՝ գլխավորապես անձնական և կենցաղային կարիքների համար: Այնուամենայնիվ կայուն կառավարման դեպքում անտառատեսության անտառները կարող են բավարարել նաև այլ տնտեսական կարիքներ:

Որպես օրինաչափություն՝ ենթանտառը հիմնականում կազմավորված է թփերի խառը տեսակներով, իսկ մակերեսները գնահատվել են թփերի կազմում գերակշռող տեսակներով:

Ուսումնասիրությունների արդյունքում 3228,5 հեկտարի վրա պտուղ-հատապտուղների հաշվարկային մոտավոր բերքը գնահատվել է մոտ 123550կգ, հավաքման տարածքում ընդհանուր շուկայական արժեքը գնահատվում է մոտ 28886000 դրամ, իսկ հաշվարկային 7805կգ ուտելի խոտաբույսերինը մոտ 11միլիոն:

Նշված հաշվարկային բերքի իրացումը իրատեսական չէ այն հիմնավորմամբ, որ անտառամերձ համայնքների բնակիչները օգտվում են << անտառային օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին կետով ընձեռնած իրավունքից՝ ազատորեն առանց որևէ թույլտվության գտնվելու անտառներում հանգստի և անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղ-հատապտուղներ հավաքելու համար, սակայն իրականում հավաքում են անձնական կարիքներից շատ ավելի, իսկ հաշվառումը գործնականում հնարավոր չէ իրականացնել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանիքի անդամները կարող են հավաքը իրականացնել տարբեր անտառամասերում (Այլուսակ 24;25):

Այլուսակ 24. Անտառտնտեսության տարածքների պտուղ հատապտուղների հաշվարկային մոտավոր պաշարների և մոտավոր շուկայական արժեքի

Անվանումը	Շուկայական գինը (դրամ/կգ) մատակարարի/հավաք ման տարածքում 2023թ	Տարեկան բերքը (կգ)	Ընդհանուր շուկայական արժեքը (հազ.դրամ) մատակարարի/հավաքման տարածքում
Տանձ	110	25000	2750000
Խնձոր	80	9900	792000
Ընկույզ (կանաչ)	600	7150	4290000
Մասուլ	250	34500	8625000
Սիզ	250	24300	6075000
Մոշ	450	22700	10215000
Ընդամենը		123550	28886000

Այլուսակ 25. Անտառտնտեսության տարածքների ուսելի խոտարույսերի հաշվարկային մոտավոր պաշարների և մոտավոր շուկայական արժեքի

Անվանումը	Շուկայական գինը (դրամ/կգ) մատակարարի/հավաք ման տարածքում 2019թ	Տարեկան բերքը (կգ)	Ընդհանուր շուկայական արժեքը (հազ.դրամ) մատակարարի/հավաքման տարածքում
Շուշան	1200	1110	1332000
Մնդիկ	1500	555	832500
Ծներեկ	2500	295	737500
Ավելուկ	1200	330	396000
Բոխի	1000	450	450000
Սիրեխ	1100	1190	1309000
Իջուս	1000	1180	1180000
Եղինջ	700	1950	1365000
ՈՒՐՈ (չոր)	4800	510	2448000
Դաղձ (չոր)	3000	235	705000
Ընդամենը		7805	10755000

5.3 Էկոտուրիզմ

Էկոտուրիզմը ճանապարհորդություն է բնության, բուսական և կենդանական աշխարհի, այնտեղ գտնվող պատմամշակութային հուշարձանների ուսումնասիության և դրանց հետ շփման նպատակով: Էկոտուրիզմը նպաստում է բնական և մշակութային

ժառանգության ճանաչմանն ու հասկանալուն և տեղի բնակչությանն այնքան շահովթ է թերում, որ մարդիկ գնահատեն ու պահպանեն շրջակա միջավայրը որպես եկամտի աղբյուր:

Էկոտուրիզմը նպաստում է էկոլոգիական գիտելիքների և տեղեկատվության տարածմանը, տարածքների էկոլոգիապես անվնաս օգտագործմանը, բնապահպանական և սոցիալ-տնտեսական համակարգերի միջև լարվածության թուլացմանը և դրանց ինտեգրմանը նպաստող գործնական և արդյունավետ միջոց: Էկոտուրիզմի անկյունաքարերն են.

- բնական և մշակութային ժառանգության պահպանություն,
- բնապահպանական կրթություն,
- տեղի բնակչության բարեկեցության բարձրացում,

Էկոտուրիզմի խնդիրները արգելավայրում և պահպանման գոտում հետևյալն են.

Բնապահպանական խնդիրներ

- էկոլոգիական պահպանություն, ներառյալ կենսաբազմազանության, հողերի, օդի որակի պահպանություն, ինչպես նաև ջրհավաք ավազանների կառավարում:

Մշակութային խնդիրներ

- տեղական բնակչության և այցելուների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկման բարձրացում
- տեղական բնական և մշակութային ժառանգության գնահատում
- կայուն տուրիզմը տեղական և ազգային մշակույթի մաս դարձնելը

Սոցիալական խնդիրներ

- տեղական բնակչության ապրուստի բարելավում և որակավորման բարձրացում,
- կայուն տուրիզմի գովազդում՝ որպես այլընտրանք մասայական տուրիզմին,
- պահպանվող տարածքներ այցելելու և բավականություն ստանալու հնարավորության ընձեռնում հասարակության լայն շերտերի համար,
- տարածքների պահպանության համար աճող եկամուտների ապահովում:

Էկոտուրիզմի ծրագրերում սահմանվում են համապատասխան երթուղիներ՝ ընդգրկելով պետական արգելավայրի և դրան հարող այն տարածքները, որոնք ճանաչողական, ուեկրեացիոն կամ գեղագիտական առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում (բնության և պատմության հուշարձաններ, գեղատեսիլ ու հետաքրքիր բնապատկերներով տարածքներ, կենդանիների և բույսերի դիտարկման հարմար տեղամասեր և այլն): Երթուղիները նախատեսվում են հաշվի առնելով բնապահպանական սահմանափակումները՝ խուսափելով խոցելի էկոհամակարգերի, վտանգված կամ հազվագյուտ կենդանիների ապրելավայրերի լայն ընդգրկումից:

Էկոտուրիզմի երթուղիների համար նախանշվում են այցելուների ցանկալի խմբերը, երթուղիների տևողությունը, թույլատրելի ծանրաբեռնվածությունը, ենթակառուցվածքների տեղաբաշխումը և տեղեկատվության տրամադրման անհրաժեշտ միջոցները:

Էկոտուրիզմի սպասարկման աշխատանքների կազմակերպման նպատակով պետք է ստեղծվի գրոսաշրջության տեղեկատվական կենտրոն, տեղադրվի փայտաշեն հարմարավետ տնակ անտառտնտեսության կենտրոնական մասնաշենքի հարևանությամբ (Նկար 2) նախատեսվեն տուրիստական սարքավորումներ և հանդերձանք (հեռադիտակներ, ծիեր, թամբեր, վրաններ, քնապարկեր, դաշտային սարքավորումներ): Էկոտուրիզմի արդյունավետ կազմակերպման կարևոր պայմաններից մեկը սպասարկող Ենթակառուցվածքի ստեղծումն է (տեղեկատվական կենտրոն, կացարաններ, սննդի և վաճառակետեր, դիտակետեր, տաղավարներ, ճանապարհներ, արահետներ, տեղեկատվական ցանց, կենցաղային սպասարկման ապահովում, ուղեփակոցներ, ցուցավահանակներ և այլն), որոնց սպասարկումը պետք է լինի շարունակական: Ենթակառուցվածքը պետք է նախագծվի, կառուցվի և սպասարկվի շրջակա բնական և մշակութային միջավայրին համահունչ, լինի խիստ սահմանափակ, փոքրածավալ և հնարավորության դեպքում տեղադրվի արգելավայրի սահմաններից դուրս (բացառությամբ Էկոտուրիզմի երթուղիների վրա նախատեսվածները):

Դաշտային ուսումնասիրություններում առանձնակի ուշադրություն է դարձվել գրոսաշրջության պոտենցիալի գնահատմանը՝ առանձնացվել են մշտական հոսքով աղբյուրները, որոնց շրջակայքում հնարավոր է ստեղծել հանգստի պայմաններ, նշագծվել են գրոսաշրջության հնարավոր երթուղիները:

Աղյուսակ 26 2024-2033 թվականների Էկոգրոսաշրջության միջոցառումների պլան

№	Գործողություն	Գումարը, (դրամ)	Ֆինանսավորման աղյուրներ
1	Այցելուների կենտրոնի ստեղծում անտառտնտեսության մասնաշենքի հարակից տարածքում (փայտաշեն տնակի կառուցում) և հագեցում տեղեկատվական և բացատրական նյութերով	6500000	Պետական բյուջե և այլ աղբյուրներ
2	Էկոտուրիզմի ծառայությունների մատուցման անհրաժեշտ միջոցների ձեռքբերում (ձի-5 հատ, վրան-10 հատ, լեռնային հեծանիվներ և այլ գույք-ինվենտարներ)	4500000	Պետական բյուջե և այլ աղբյուրներ
3	Տեղեկացնող և բացատրական նշանների պատրաստում և ստեղադրում գրոսաշրջային երթուղիների երկայնքով	1500000	Պետական բյուջե և այլ աղբյուրներ
4	Գովազդային նյութերի պատրաստում իրատարակում և տարածում	2000000	Պետական բյուջե և այլ աղբյուրներ
5	Տուրոպերատորների և սպասարկող անձնակազմի համար դասընթացների և ճանաչողական այցի կազմակերպում	3500000	Պետական բյուջե և այլ աղբյուրներ
Ընդամենը		18000000	

Բաժին 6. ԲՆՈՒԹՅԱՆ և ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

6.1 ԲՆՈՒԹՅԱՆ հուշարձաններ

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքը, լեռնային ռելիեֆը, կլիմայական առանձնահատկություններն ու ուղղաձիգ գոտիականությունը պայմանավորել են տարածքի լեռնագրական և լանդշաֆտային բազմազանությունը, որոնք տարբեր ինտենսիվության բնական և մարդածին երևույթների ազդեցությամբ ծեավորել են բնական միջավայրի ինքնատիպ տարրեր՝ բնության կենդանի և անկենդան հուշարձաններ: Վերջիններս գտնվելով գեղատեսիլ դժվարամատչելի վայրերում մշակութային կորողների հետ միասին հաճախ ծեավորում են ռեկրեացիոն բարձրարժեք համալիրներ:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ հաստատված ցանկում Սյունիքի անտառտնտեսության շրջակա տարածքներում գրանցված են 12 բնության հուշարձաններ (Այլուսակ 27):

Այլուսակ 27. Սյունիքի անտառտնտեսության և հարակից տարածքների բնության հուշարձանների ցանկը

Հուշարձանի անունը	Գտնվելու վայրը	Հուշարձանի տիպը
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Գորիս քաղաքի շրջակայքում	Երկրաբանական հուշարձան
«Սատանա» բնական քանդակ	Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-Ալ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» սյունածն բազալտներ	Հայիծոր գյուղից 2 կմ արմ., Որոտանի կիրճում	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» սյունածն բազալտներ	Որոտան գյուղի հվ-արմ. Եզրին	Երկրաբանական հուշարձան
«Անանուն» բուրգանման մնացուկներ	Վերիշեն գյուղից 2 կմ հս., Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում	Երկրաբանական հուշարձան
«Սատանի կամուրջ» բնական կամուրջ	Տաթև գյուղից մոտ 2.5 կմ հս-Ալ Հալիծորի վարչական սահմանագծին հարակից, Որոտան գետի կիրճի ամենից խոր մասում Բարձրությունը ծովի մակարդակից 1000 մ:	Երկրաբանական հուշարձան
«Բնական թունել»	Քարահոնք գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա	Երկրաբանական հուշարձան
«Որոտան» աղբյուր	Որոտան գյուղի հս. ծայրամասում	Ջրաերկրաբանական հուշարձան
«Շուան» աղբյուր	Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-Ալ., ծ.մ.-ից 1930 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Սպիտակջուր» աղբյուր	Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ.-ից 1480 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
«Որոտան» բնապատմական համալիր	Որոտան գյուղի հվ-արմ. Եզրին աջ ու ձախ ափերին	Բնապատմական հուշարձան
Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Գորիս քաղաքի Ալ. մասում, Վարարակ գետի ձախ ափին	Բնապատմական հուշարձան

Հարկ է նշել, որ հաստատված ցանկում ներառված բնության հուշարձանները չունեն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված անձնագրեր, քարտեզագրված և ճշգրտված չեն դրանց պահպանման գոտիները, սահմանագրատված չեն հողամասերը, ինչը նախատեսված չէ անտառշինական աշխատանքների տեխնագործականություն: Նշվածը հնարավոր է իրականացնել միջազգային կամ բյուջետային ֆինանսավորման ծրագրերով, ինչպես ՀՀ 2012 թ. պետական բյուջեի շրջանակներում իրականացվել է «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի տարածքներում գտնվող բնության հուշարձանների հաստատված ցանկի համալրման, պահպանման գոտիների տարածքների ճշգրտման, հողամասերի սահմանագրատման և քարտեզագրման աշխատանքներ» ծրագիրը:

6.2 Պատմամշակութային հուշարձաններ

Սյունիքի ենթաշրջանի բնակավայրերում և շրջակա տարածքներում առկա են ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատված ցանկում ներառված պատմամշակութային շուրջ 500 հուշարձաններ՝ խաչքարեր, բնակելի քարայրեր, 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբների կառուցված տներ և այլ կառուցներ, միայն Գորիս քաղաքում 278 հուշարձան, որոնցից որոշները կներառվեն Սյունիքի անտառտնտեղության համար մշակվող գրոսաշրջության ծրագրում:

Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկից առանձնացվել է Սյունիքի անտառտնտեղության տարածքի և հարակից տարածքների պատմական հուշարձանների վերաբերյալ տվյալները: Դրանք քարտեզագրվել են ըստ հուշարձանների խմբերի:

Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, ձիարշավներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ և այլ) լրացուցիչ լրուց ներդրում կարող է ունենալ համայնքային զարգացման մեջ: Ներկայում նման ծառայություններ հիմնականում հասանելի չեն: Բոլոր համայնքներում կան տուրիստական գրավչության վայրեր, այն է՝ բնական և պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններ, ավերակներ, ձիարշավի և քայլարշավի հնարավորություններ, եկեղեցիներ և այլ տեսարժան վայրեր, սակայն այս հնարավորությունները նպատակային չեն օգտագործվում:

Էկոգրոսաշրջության զարգացման հարցում կարևոր է էկոգրոսաշրջության այնպիսի կառավարումը, որը կկանխարգելի այցելությունների հնարավոր բացասական ազդեցությունները բնական էկոհամակարգերի և տեսակների վրա: Ընդհանուր առմամբ էկոգրոսաշրջությունը կարող է ներդրում ունենալ անտառների կայուն կառավարմանը (Քարտեզ 20):



Նկար 1. Այցելուների կենտրոնի համար առաջարկվող տնակ, նպատակահարմար է տեղադրել Երևան-Գորիս մայրուղուց անտառտնտեսության գրասենյակ անտառտնտեսության գրասենյակի թեքվող հատվածում

**Բաժին 7 ՀՆԱՐԱՎՈՐ ԴՐԱԿԱՆ ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և
ՈՒԺԵՂԱՑՄԱՆ, ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,
ԲԱՑԱՌՄԱՆ, ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

7.1 Ընդհանուր տեղեկատվություն

2007թ. գոյքագրմամբ անտառմշակույթների ընդհանուր մակերեսը կազմել է 361,1հա, չմիակցված սաղարթով՝ 33,7հա (Ներառյալ Արծվանիկի անտառապետությունը):

2023թ. գոյքագրմամբ անտառմշակույթների ճշտված մակերեսը կազմել է 313,3հա, չմիակցված սաղարթով՝ 17,0հա:

Անտառմշակույթների ընդհանուր մակերեսի 37,8%-ը գնահատվել է լավ՝ (118,3հա), 108,8հա բավարար(34,7%) և անբավարար՝ 27,5% (Այլուսակ 28):

Այլուսակ 28 .Անտառմշակույթների վիճակի գնահատականը

№	Անտառպետության անվանումը	Անտառմշակույթի վիճակը, հա			Մակերեսը, հա
		Լավ	Բավարար	Անբավարար	
1	Գորիսի	113,7	106,5	79,6	299,8
2	Շուտոնիսի	4,6	2,3	6,6	13,5
Ընդամենը		118,3	108,8	86,2	313,3

Անտառտնտեսությունում մինչև 25° թեքության անտառային բացատներն ու պարապուտ տարածքները, որտեղ հիմնականում իրականացվում են անտառմշակութային աշխատանքները, զբաղեցնում են 614,5հա: 30° և բարձր թեքությունների վրա տարածքները թողնվել են բնական վերականգնման տակ (Այլուսակ 29):

Այլուսակ 29. Ոչ անտառածածկ մակերեսների տեղաբաշխումն ըստ լանջի թեքության աստիճանի

Լանջի թեքությունը	Հրդեհված, մահացած տնկարք	Նոսրուտներ	Բացատներ և պարապուտներ	Ընդամենը
Մինչև 5°		0,9	24,1	25
$6\text{-}10^{\circ}$		17,4	35,7	53,1
$11\text{-}15^{\circ}$		27,2	86,5	113,7
$16\text{-}20^{\circ}$		127,7	179,5	307,2
$21\text{-}25^{\circ}$		272,9	288,7	561,6
$26\text{-}30^{\circ}$	4,8	139,3	126,4	270,5
$31\text{-}35^{\circ}$		113,7	52,1	165,8
$36^{\circ}\text{-ից բարձր}$	0,8	67,4	43,1	111,3
Ամբողջը	5,6	766,5	836,1	1608,2

2024-33 թվականների համար նախնական գնահատմամբ նախատեսվում են անտառիմնման և վերականգնման միջոցառումներ՝ ընդհանուր 468,0 հեկտարի վրա, նույն թվում անտառային բացատներում, պարապուտ տարածքներում և հրդեհված ու չվերականգնված տարածքներում՝ 302,2հա, ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է

Վերականգնման միջոցառումներ 57,6 հեկտարի վրա, նոսրուտներում բնական վերականգնման միջոցառումներ՝ հարթակների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով 108,2 հեկտարի վրա (Այլուսակ 30):

**Այլուսակ 30. 2024-33 թվականների համար նախատեսվող
անտառվերականգնման աշխատանքների մակերեսներն ըստ
անտառպետությունների**

Անտառպետություն	Անտառմշակույթի հիմնում	Անտառմշակույթի լրացում	Բնական վերականգնման օժանդակում	Ընդհանուր
Գորիսի	305,5	1,0	158,5	465,0
Շուշնուիսի	1,7		1,3	3,0
Ամբողջը	307,2	1,0	159,8	468,0

Բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է նաև 25000գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 3000 հեկտար անտառներում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը:

7.2 Անտառաճեցման պիտանելիության դասակարգում

Անտառվերականգնման միջոցառումների նախագծման ժամանակ հաշվի է առնվել տարբեր անտառային տիպերում և հողային կատեգորիաներում բնական վերաճի ընթացքը և անտառաճման պայմանները: Անտառի հիմնման, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումների նախագծման համար հիմք են ընդունում հողային բերրիության և անտառաճեցման պիտանելիության դասակարգումը՝

- Անտառաճեցման պիտանելիության առաջին խմբի մեջ են մտնում մինչև 20° թեքության լանջերը, հողերը հզոր կամ միջին հզորության են, մայրական ապարների ելքը մինչև 20%: Այս պայմաններում կարող են աճել արժեքավոր, արագաճ, երկարակյաց անտառային, ինչպես նաև պտղատու տեսակներ:

- Երկրորդ խմբի մեջ են ներառվում ավելի փոքր հզորություն ունեցող հողերը, համեմատաբար վատ անտառաճեցման պայմաններով, այն է միջին աստիճանի քարքարոտ, մայրական ապարների ելքը 20-40%, միջին հզորության, մինչև 35° թեքության լանջերի վրա գտնվող տարածքները: Նշված պայմաններում բարձրարժեք տեսակները աճի և արտադրողականության տեսանկյունից զիջում են 1-ին խմբին:

- Երրորդ խմբի մեջ մտնող հողային պայմաններում անտառաճեցման հնարավորությունները սահմանափակ են, որտեղ աճում են սահմանափակ տեսակների ծառաթփատեսակներ, որոնք պահանջնություն չեն հողակիմայական պայմանների նկատմամբ:

- Չորրորդ խմբի մեջ են մտնում հողային պայմանների այն տարբերակները, որոնք բավարար չեն անտառաճեցման համար, այսինքն շատ ուժեղ քարքարոտ են, իսկ մայր ապարի ելքը կազմում է 60% և ավելի:

7.3 Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ

Կախված անտառի մնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից նախատեսվում են սերմերի ցանքի կամ տունկի եղանակով:

Ցանքի եղանակով հիմնված տնկարկը սովորաբար ավելի երկարակյաց և կենսաբանորեն ավելի կայուն է, սակայն առաջին տարիներին մեծ է կախվածությունը բնական պայմաններից և սերմերի ծլունակությունից, բուսակները ենթակա են ոչնչացման կլիմայական պայմանների տատանումների հետևանքով, ինչպես նաև մոլախոտերի հետ միաժամանակ աճման պայմաններում ցածր է մրցակցությունը: Տնկման առավելությունը կայանում է նրանում, որ տնկիները առաջին տարիներին ավելի արագ են աճում, քանի որ իրենց դանդաղ աճման շրջանը անցել են տնկարանում, ավելի քիչ են տուժում մոլախոտերի հետ պայքարում, ինչպես նաև քիչ են վնասվում կրծողների և թռչունների կողմից:

Դաշտային ուսումնասիրության արդյունքներով, հաշվի առնելով անտառաճման պայմանները և ծառատեսակի կենսաբանական առանձնահատկությունները, ընտրվել են համապատասխան անտառվերականգնման եղանակները, հիմնման սխեմաները և հաշվարկվել են տնկանյութի ու սերմերի պահանջը:

Անտառի հիմնումը հիմնականում նախատեսվում է հատկապես խրամատային եղանակով՝ կիրառելով սերմնաբուսակների տնկման և սերմերով ցանքսի եղանակը, իսկ խոշոր տնկանյութով համեմատաբար հարթ տարածքներում հիմնելու դեպքում՝ փոսային եղանակով: Խրամատների երկարությունը, կախված հողատեսքից և մայր ապարների ելքի աստիճանից, նախատեսվում է 1500-4000 գծմ/հա:

Անտառվերականգնում նախատեսվում է ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման նպատակներով և իրականացվում են մայր սաղարթի տակ ցանքսի կամ տնկման եղանակներով: Որոշ հատվածներում, որտեղ բնական պատուհանները համեմատաբար մեծ են և ընդգրկում են մակերեսի ոչ պակաս 40%-ը, անտառաճեցման նպաստավոր պայմանների առկայության դեպքում, նախատեսվում է տնկման եղանակով:

Բնական վերականգնման օժանդակում իրականացվում է ցանկապատման և հանքայնացման եղանակով, նախատեսվում է հարթակներով (1x1մ) լրացուցիչ սերմերի ցանքսով, որոնց քանակությունը կախված ծառուտի լրիվությունից, մայր ապարների ելքից և առկա բնական վերաճի քանակությունից, նախատեսվում է 500-1000 հատ 1 հեկտարում:

7.4 Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները

ա) Կաղնի խոշորառէց

• Կաղնու սերմերի ցանքսով (հիմնական տեսակ) և հացենի սովորական, թխկի սրատերև, կեչի, թխկի դաշտային և բարձր լեռնային, թեղի խորդուբորդ, լորենի՝ տնկիներով (ուղեկցող տեսակներ): Հողի նախապատրաստումը հատկապես 15° -ից

բարձր թեքությունների վրա խրամատներով ($0,5 \times 0,35$ մետր), երկարությունը սովորաբար վերցվում է 10 մետր, հորիզոնական ուղղությամբ 2 մետր ընդհատումով: Խրամատների ընդհանուր երկարությունը 1 հեկտարում, կախված մայր ապարների ելքի տոկոսից, նախատեսվել է 1500-4000 գծմ: Մեկ ցանքսատեղում առաջարկվում է 3-5 սերմ:

• Սոճու անտառմշակույթների հիմնում, առաջարկվում է հիմնել սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան սերմնաբուսակներով, որի դեպքում հողի նախապատրաստման, տնկման և խնամքի ագրոտեխնիկական պահանջների բավարարման դեպքում ապահովում է բարձր կազողունակություն և ընթացիկ աճ: Հաշվի առնելով սոճուտներում, հատկապես սաղարթային հրդեհների առաջացման դեպքում հրդեհաշխման աշխատանքների մեծ դժվարությունները և հնարավոր կորուստները, հրդեհների տարածումը կանխելու նպատակով, նախատեսվում է խրամատային եղանակով հիմնել 2 շարք սոճի, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևավոր ծառատեսակների տնկիններով:

գ) Փոսերով հողի նախապատրաստումը ($0,5 \times 0,5 \times 0,5$ մետր) նախատեսվում է լանջերի մինչև 15° թեքություններում, համեմատաբար խոշոր տնկանյութով հիմնադրման համար 3×3 սխեմայով՝ անտառային տանձենու և խնձորենու կամ անտառային կեռասենու համար:

• Անտառային տանձենին և խնձորենին փոսային եղանակով 3×3 սխեմայով:

դ) Անտառվերականգնումը նախատեսվում է նաև ցածր լրիվության ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով: $0,3-0,4$ լրիվության անտառներում մայր սաղարթի տակ համեմատաբար բարձր թեքությունների վրա խրամատներով, սերմերի ցանքսով, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ հանքայնացման եղանակով, որի դեպքում պատրաստում են հարթակներ (1×1 մետր), վերցվում է խաշամը, կատարվում է փխրեցում և հարթակների 4 անկյուններում ցանվում սերմերը:

Խրամատների ընդհանուր երկարությունը և հարթակների քանակությունը որոշվում է հաշվի առնելով ծառուտի լրիվությունը, առկա բնական վերաճի քանակությունը և մայր ապարների ելքի տոկոսը: Այս տեսանկյուններով նախատեսվող հարթակների թիվը կազմում է $500-1000$ հատ, որը ապահովում է համապատասխանաբար $2000-4000$ ցանքատեղ, ընդ որում անմիջական մայր սաղարթի տակ սերմերի ցանքս չի կատարվում, այլ կատարվում է սերմերի տարածման գոտուց դուրս:

Ցանկապատի պատրաստում նախատեսվում է ինչպես անտառմշակույթների հիմնում նախատեսած տարածքներում, այնպես էլ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ նշանակած տարածքներում՝ անասունների մուտքը կանխելու նպատակով և նախատեսվում է մետայա փշալարով, իսկ սյունները փայտից, որոնց հիմքային մասը մշակվում է ծովթով:

Ագրոտեխնիկական միջոցառումներից կարևորվում են անտառմշակույթիների խնամքի աշխատանքները:

Անտառագիտական հասկացողությամբ անտառմշակույթիները բավարար կպչողականություն, աճ և արտադրողականություն ապահովում են հիմնման տարում և հաջորդող 4-5 տարիներին 15 անգամ կատարված խնամքի դեպքում, ընդ որում հիմնան տարում (գարուն) կատարվում է քաղիան փիսրեցում 5 անգամ, 2-րդ տարում՝ 4 անգամ, 3-րդ՝ 3, 4-րդ՝ 2 և 5-րդ տարում՝ 1 անգամ:

Անտառվերականգնման միջոցառումների և տնկարանի ստեղծման նպատակով անտառտնտեսության անտառածածկ տարածքներում առանձնացվել են ընդհանուր 142,1հա մշտական անտառսերմնային տեղամասեր, նույն թվում 40,9հա Գորիսի, 101,2հա Շուտնուիսի անտառապետություններում: Ընդ որում, սոճու, թխկու, հունական ընկուզենու և կաղնու սերմերի հավաքը նախատեսվում է իրականացնել դրանց գերակշռությամբ ծառուտներից, իսկ հացենի, թեղի, տանձենի և խնձորենի տեսակներինը՝ նաև որպես ուղեկցող տեսակ հանդիպող ծառուտներից (Աղյուսակ 31):

Աղյուսակ 31 Տեղեկագիր անտառսերմնային մշտական տեղամասերի

№	Անտառպետության անվանումը	Գլխավոր ծառատեսակ	Քառորդական քառորդական	Հաստիացուառ Ն	Մականաց Ն	Մակերեսը հեկտար	Լանջի թվությունը	Ծառատի կարգը	ԾՄ	Բնիկուր	Լիվայանի նորություն	Տարի
1	Գորիսի	Կաղնի		11	59	2,3	25	7կ2թ1թս	1600	4	0,4	90
				11	73	1,2	15	7կ2հթ1թս	1410		0,6	110
				11	75	1,9	30	5կ3թս2hg	1370	3	0,6	110
				40	2	6,6	10	7կ3թ+թս	1580	4	0,6	110
				40	4	3,9	25	8կ2թ+թս	1690	4	0,6	90
				40	5	1,7	25	8կ2թ+hg	1680	3	0,6	90
		Սոճի	Ընդամենը		17,6							
				6	99	1,1	25	10սոճի	1690	1	0,7	55
				6	100	0,7	25	10սոճի	1670	1	0,7	55
				12	11	4,1	20	10սոճի	1890	2	0,7	45
				12	27	5,4	20	10սոճի	1780	1	1	45
		Հացենի	Ընդհամենը		11,3							
				40	11	5,8	20	6hg3թ1թս+կ	1720	2	0,6	45
			Ընդամենը		5,8							
		Թխկի		6	56	1,1	30	10թխ+թղ+Sձ	1670	2	0,6	55
				6	58	1,1	20	5թխ5Sձ+Բլ	1690	1	0,7	55
		Ընկուզենի հունական	Ընդամենը		2,2							
				10	17	4,0	30	8Հը1թ1Հց+Թխ+ Sձ+Ուոծ	1270	4	4,0	110
			Ընդամենը		4,0							
			Ընդամենը անտառպետությունում		40,9							
				6	24	1,7	10	9կ1թ+թս,hg	1170	4	0,6	110
2	Շուտնուիս	Կաղնի		7	37	0,7	25	10կ+թս,hg,թղ	1040	4	0,5	90
				11	2	6	20	8կ2թ+թս,hg	1690	4	0,6	85
				13	21	7,3	15	7կ2թ1թս+լր	1780	4	0,5	130
				15	13	3,2	20	7կ2թ1թս+hg	1520	4	0,6	90

№	Անտառպետության անվանումը	Գլխավոր ճառատեսակը	Քառուկուսու թ	Հատվածի N	Մակերեսը, հեկտար	Լանջի թերությունը	Ծառոտի կազմը	ԾԱբ	Բնիտետը	Լրիվությունը	Տարիք	
			16	3	3,5	25	7կ3թ+թխ,hg	1610	4	0,5	110	
			16	32	8,5	20	7կ3թ+թխ,hg	1700	4	0,5	110	
			17	26	0,7	20	7կ2թ1թխ+hg	1960	4	0,5	140	
			18	2	6,2	15	10կ+թխ,թ	1820	3	0,6	130	
			18	32	6	15	5կ5թ+թխ,hg	1700	3	0,6	140	
			19	12	5,3	20	7կ3թ+թխ	1790	3	0,6	130	
			23	12	12,1	15	7կ2թ1թխ+hg,տՃ	1750	4	0,5	90	
			28	25	6,3	20	5կ3թխ1տՃ1թխ	1560	4	0,6	90	
			32	4	3,1	20	6կ3թ1թխ	1410	4	0,5	130	
			32	18	0,8	20	7կ2թ1թխ+hg	1390	4	0,4	110	
			41	2	7,4	20	7կ3թ+թխ,hg	1620	4	0,5	130	
			41	26	1,9	20	8կ2թ+թխ,տՃ	1670	4	0,4	130	
			41	51	3	25	8կ2թ+տՃ	1410	4	0,4	90	
			42	31	11,9	15	7կ2թ1hg+թխ	1390	4	0,5	110	
			43	22	2,7	25	6կ3թ1hg+տՃ+թխ	1710	4	0,5	90	
			Ընդանենը		98,3							
			Հացենի	18	4	0,4	10	10hg+տՃ	1770	2	0,4	35
				32	22	2,5	15	10hg	1360	4	0,7	35
			Ընդանենը		2,9							
			Անտառպետությունում		101,2							
			Ամբողջը		142,1							

Այլուսակ 32. Սյունիքի անտառատնտեսության անտառպատման և անտառվերականգնման միջոցառումներ

Անտառապետության անառանումն	Քառակուսի N	Հատված N	Մակերեսը, հա	Դիրքադրություն	ԾՄԲ, մ	Բոնիտես	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատ- րաստման եղանակ	Անտառվերա- կանգնման եղանակ	Վերականգնվող տեսակը	Կրոմքի քանակը, կ	Ենթարժակեր քանակը, հատ	Ականցութիւն քանակ հատ	
Գորիսի	2	1	1,5	Ալ 15	1610	4	Բոշխային B2	Պարապուտ	փուերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի			500	
	2	2	2,6	Հս-ամ 25	1620	4	Բոշխային B2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Խնձորենի			500	
	2	3	3,1	Հս 30	1620	4	Բոշխային B2	Պարապուտ, Առ ձառ Կ,Թխ,Հց	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Շնկութենի			500	
	2	4	6,7	Հս-ալ 20	1650	4	Բոշխային B2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	94			
	2	5	8	Հս-ամ 25	1660	5	Բոշխային B2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Թխվի,Հացենի			2600	
	2	6	4,5	Հս-ալ 25	1620	5	Բոշխային B1	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	110			3100
	2	7	10,7	Հս-ալ 30	1640	5	Բոշխային B2	Պարապուտ, Կ,Բ,Թխ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	220			6700
	2	9	4,1	Հս 30	1590	5	Բոշխային B2	Նոսրուտ 0,2Կ,Բ	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	290			8000
	2	14	5,2	Ալ 30	1570	5	Բոշխային B2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Թխվի,Հացենի				5200
	2	15	0,7	Ամ 30	1540	5	Բոշխային B2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	25			700
	2	16	1,3	Հս-ալ 30	1550	4	Բոշխային B2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	50			1300
	2	18	9,2	Հս-Ամ 30	1560	5	Բոշխային B2	Նոսրուտ 0,2Կ,Թխ,Հց	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	380			
	2	19	1,4	Հս 25	1590	4	Բոշխային B2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	50			1400
	4	63	2,6	Հս-Ալ 30	1510	4	Տարախոտային C1	Անտառապատման 0,4	հարթակներով 500հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	80			
	4	82	1,3	Ալ 30	1550	4	Տարախոտային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	56			
	4	84	0,6	Հս-Ալ 25	1490	3	Տարախոտային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	26			
	4	85	6,3	Հս-Ալ 30	1520	5	Բոշխային B1	Բացատ, Առ	խրամատներով	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	225			

Անտառպետության անվանումն	Քառակուսի հա շատվական	Հատված Ն	Մակերեսը, հա	Դիրքադրություն	ԾՄԲ, մ	Բոնիտես	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատ- րաստման եղանակ	Անտառվերա- խանգման եղանակ	Վերականգնուղ տեսակը	Կղմերի քանակը, կ	Հյումարտակների քանակը, հատ	Ականջութիւնակ հատ		
								ծառ, բ	3000գծմ/հա		Թէվկի, Հացենի			6300		
4	86	0,9	Հվ 30	1580	5	Բոշխային B1	Նոսրուտ 0,24,Բ,Հց	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	38					
5	24	4,5	Հս-Ամ 25	1720	4	Բոշխային B2	Պարապուտ, Առ ծառ Կ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	160			4500		
5	35	23,6	Հվ-ալ 25	1640	5	Բոշխային B2	Պարապուտ, Կց,Բց	խրամատներով 2500գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի		14750			29500	
5	37	0,5	Հվ-Ամ 30	1680	4	Տարախտուային C2	Ցածր լրիվության 0,4	հարթակներով 500հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	15					
6	20	2	Հս-Ամ 10	1730	3	Տարախտուային C2	Պարապուտ	փուտերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի		650			650	
6	79	0,7	Հս-Ամ 25	1770	2	Տարախտուային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 500հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	22				650	
6	80	0,7	Հս-Ամ 10	1780	2	Տարախտուային C2	Բացատ	փուտերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի		230			230	
6	93	6,3	Ալ 20	1730	4	Տարախտուային C2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի	226			6300		
6	94	3,6	Ալ 25	1760	4	Տարախտուային C2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի		4800			9600	
6	95	2,5	Հս-Ամ 25	1790	4	Տարախտուային C2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի,	90			2500		
6	102	2,3	Հս-Ամ 25	1625	5	Բոշխային B2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	99					
6	103	2,7	Ամ 30	1645	3	Տարախտուային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 500հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	86					
6	104	3,1	Հվ 25	1660	3	Տարախտուային C2	Բացատ, առ ծառ, կ,ս,տձ	խրամատներով 2500գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի,	93			2640		
6	112	3,9	Հվ-Ամ 25	1700	4	Տարախտուային C2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Կաղնի,	140			3900		
6	113	3	Հվ 20	1720	4	Տարախտուային C2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի		3990			7980	
6	114	4,4	Հվ 20	1735	4	Տարախտուային C2	Պարապուտ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի		5850			11700	

Անտառապետության անվանումն	Քառակուսի N	Հատված N	Մակերեսը, հա	Դիրքադրություն	ԾՄԲ, մ	Բոնիտես	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատ- րաստման եղանակ	Անտառվերա- խանգման եղանակ	Վերականգնուող տեսակը	Կըմբիդի քանակը, կ	Հցընաբառակերրի քանակը, հատ	Ականջութիւ քանակի հատ	
	7	56	2,7	ՀՎ-Ամ 15	1630	3	Տարախտային C2	Պարապուտ	փոսերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի Խնձորենի Ընկույզենի			900	
	9	2	6	ՀՎ-Ալ 15	1560	3	Տարախտային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 500հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	190			900
	9	4	3,1	ՀՎ-Ամ 10	1600	4	Տարախտային C2	Պարապուտ	փոսերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի Խնձորենի Ընկույզենի			1000	
	9	5	1,1	ՀՎ 5	1580	4	Տարախտային C2	Պարապուտ, առ. ծառ ԽՃ	փոսերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի Խնձորենի Ընկույզենի			370	
	9	36	5	Ամ 25	1450	4	Տարախտային C2	Պարապուտ, առ. ծառ կ,բ,ակ	խրամատներով 2500գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Հացենի,Թժկի		5500		
	9	39	3,1	ՀՎ 25	1480	4	Տարախտային C2	Պարապուտ, առ ծառ 10Կ	խրամատներով 2500գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Հացենի,Թժկի		3400		
	9	54	8,6	Ալ 15	1510	3	Տարախտային C2	Պարապուտ	փոսերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի Խնձորենի Ընկույզենի			2860	
	10	24	1,7	Ալ 30	1270	4	Տարախտային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	73			
	10	27	1,2	ՀՎ-Ամ 25	1235	4	Տարախտային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	52			
	11	19	2,6	Ալ 20	1560	3	Տարախտային C2	Ցածր լրիվության 0,3	հարթակներով 700հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	112			
	11	31	1,8	Ալ 25	1350	4	Տարախտային C2	Բացատ, առ. ծառ կ,բ	խրամատներով 3000գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	կաղնի Հացենի,Թժկի		65		1800
	11	48	5	ՀՎ-25	1520	4	Բոշխային B2	Նորուտ, 6Բ3Կ1Թժւ+Հց	խրամատներով 2500գծմ/հա	Անտառմշակույթի հիմնում	Սոճի Հացենի,Թժկի		6000		
	11	55	0,6	Ալ 15	1620	3	Տարախտային C2	Բացատ, առ. ծառ կ,բ	փոսերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի Խնձորենի Ընկույզենի		200		
	11	105	1,6	ՀՎ-Ալ 10	1510	4	Տարախտային C2	Պարապուտ, առ ծառկ,բ,հց 8Բ1Կ1Հց	փոսերով 3X3մ	Անտառմշակույթի հիմնում	Տանձենի Խնձորենի Ընկույզենի		530		

Անտառապետության անվանումն	Քառակուսի հ	Հատված Ն	Մակերեսն կազմություն	ԾՄԲ, մ	Բոնիտեն	Անտառի տիպ	Հողատեսք	Հողի նախապատրաստման եղանակ	Անտառավերաբանական դաշտանալ	Վերականգնութեան տեսակը	Եղմնութիւ քանակը, կ	Հրամաբռակաների քանակը, հատ	Կկանցութիւ քանակի հատ	
11	108	4,7	Հս-Ալ 30	1380	4	Տարախտառային C2	Ցածր լրիվության 0,4	Կարթակներով 500հատ/հա	Բնական վերականգնման օժանդակում	Կաղնի	150			
12	2	5	Ալ 25	1930	4	Տարախտառային C2	Պարապուտ	Խրամատներով 2500գծմ/հա	Անտառոմշակույթի հիմնում	Սոճի Հացենի, Թթվկի		13200		
12	6	1	Հս-Ալ 15	1800	4	Տարախտառային C2	Ցածր լրիվության 0,3	Կարթակներով 700հատ/հա	Անտառոմշակույթի լրացում	Կաղնի	43			
